

2025

*Գեղարքունիքի մարզային
փրկարարական վարչության հատուկ
ջրափրկարարական ջոկատի կայան*

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂ՝
«ՇԻՆ ԻՆՃ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Ա/Ձ Ա. Գալոյան
ՀՀ ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com



***Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության
հատուկ ջրափրկարարական ջոկատի կայան***

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Հանգստի գոտի 1-ին փողոց 1/11

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

«ՇԻՆ ԻՆՃ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ տնօրեն՝

Ա. Քոչարյան

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	5
1.1	Նախաձեռնողի մասին տեղեկություն	5
1.2	Հապավումներ	5
1.1	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	6
1.2	Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը	7
1.3	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	11
1.3.1	<i>Ներկա վիճակ . Նախատեսվող գործունեության նկարագիր</i>	11
1.3.2	<i>Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր</i>	15
1.3.3	<i>Ջեռուցում և օդափոխություն</i>	17
	Ջեռուցման համակարգ	17
	Օդափոխություն	17
1.3.4	<i>Էլեկտրամատակարարում</i>	18
1.3.5	<i>Կանաչապատման աշխատանքներ</i>	18
1.3.6	<i>Կանաչ տարածքի ռոտզման ջրապահանջի հաշվարկ</i>	19
1.3	Աղմուկ և թրթռում:.....	19
1.4	Իրավիճակային հատակագիծ	22
1.5	Գլխավոր հատակագիծ.....	27
1.6	Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց	30
1.7	Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ	31
2.	ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆ	32
2.1	Աշխատանքների կատարման սխեմա	33
2.2	Նախապատրաստական փուլ	34
2.3	Շինարարության ժամկետները	35
2.4	Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը	35
2.5	Հողային աշխատանքներ.....	35
2.6	Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները.....	36
2.7	Թափոնների կառավարում	37
3.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	39
3.1	Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական.....	39
	նկարագիրը և լանդշաֆտը	39
3.2	Հատուկ պահպանվող տարածքներ.....	39
3.3	Մթնոլորտային օդ	39
3.4	Ջրագրություն	40
3.4.1	Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	40
3.5	Հողային ռեսուրսներ	47
3.6	Կլիման և օդերևութաբանական պայմանները.....	48

3.7	Կենսաբազմազանություն.....	50
3.7.1	Բուսական աշխարհ	50
3.7.2	Կենդանական աշխարհ	54
3.8	Պատմամշակութային և բնության հուշարձանները	58
4	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ.....	63
4.1	Ռիսկերի գնահատում	63
4.2	Արտանետումների աղբյուրները	63
4.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	64
4.3.1	Մթնոլորտային օդ.....	64
4.3.2	Ջրային ռեսուրսներ.....	64
4.3.3	Հողային ռեսուրսներ	65
4.3.4	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը.....	65
4.3.5	Հակահրդեհային միջոցառումներ.....	66
4.3.6	Աղմուկ և թրթռում.....	67
4.3.7	Թափոնների կառավարում	67
3.8.1	Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր.....	68
5	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	69
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	70
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ.....	75
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	80
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....	81

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Նախաձեռնողի մասին տեղեկություն

Նախաձեռնող՝	«Շին Ինժ Մերվիս» ՍՊԸ
Իրավաբանական հասցեն՝	ՀՀ ք. Սևան Իսակովի 3
Նախատեսվող գործունեության հասցեն՝	ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Հանգստի գոտի 1-ին փողոց 1/11
ՇՄԱԳ նախագծի մշակող՝	Ա/Ձ Արամ Գալոյան
Հեռախոս՝	+37499994222

1.2 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

ՀՀՇՆ՝ Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր

ԻՏԱ՝ ինժեներատեխնիկական անձնակազմ

ՏՏԶ՝ տեղական տնտեսական զարգացման

1.1 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում, Սեւանա լճի ափին կառուցել ջրափրկարարական կայան:

Ջրափրկարարական կայանի կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Հանգստի գոտի 1-ին փողոց 1/11 հասցեում:

Ջրափրկարարական կայանի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

"Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /2023թ./ 12 հոդվածի 6-րդ մասի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Ջրափրկարարական կայանի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության վերաբերյալ Սևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

1.2 Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Հանգստի գոտի 1-ին փողոց 1/11 հասցեում նախատեսվող ջրափրկարարական կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2023թ.) – Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 12-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երկու կատեգորիայի՝ «Ա», «Բ» ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) – կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և

կազմակերպական հիմքերը ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները: **«ՀՀ հողային օրենսգիրք» (2001)** - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

ՀՀ ջրային օրենսգրք 2002թ. - Հայաստանի Հանրապետությունում ջրային հարաբերությունները կարգավորվում են սույն օրենսգրքով, օրենքներով և իրավական այլ ակտերով: *Ջրային հարաբերություններ*՝ ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և ՀՏԿ-ների կամ դրանց մասի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: 2003 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ

վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

«Բուսական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 1999թ.

«Կենդանական աշխարհի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, 2000թ.

«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010 թ. N 71-Ն որոշումը,

«ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 29.01.2010թ. N 72-Ն որոշումը

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի հուլիսի 31-ի «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N 781-Ն որոշում:

ՀՀ կառավարության 02.11.2017թ. N 1404-Ն «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ հայաստանի հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի n 1026-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշում:

ՀՀ կառավարության 08.09.2011թ. N 1396-Ն «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի n 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու եվ 2001 թվականի ապրիլի 12-ի n 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշում:

2002թ. հունիսի 12-ի ՀՕ-376-Ն օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթ,

Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015թ. նոյեմբերի 30-ի N 1243-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի 16-րդ ենթակետ,

Կառավարության 2015թ. մարտի 3-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի կարգի 141-րդ և 173-րդ կետերի, N 4 հավելվածի N 3 ցանկի 4-րդ կետի 1-ին ենթակետի «իզ» պարբերություն,

Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի N 102-Ն հրամանով հաստատված գործող նորմերով սահմանված երկրաշարժադիմացկունության հիմնական սկզբունքների, 2014թ. հունիսի 21-ի ՀՕ-110-Ն օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի, 7-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի դրույթներ:

Սևանա լճի մասին ՀՀ օրենք (ՀՕ-190, 15.05.2001թ.),

ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի կանոնադրությունը հաստատելու մասին» N 927-Ն որոշում,

ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի «Սևան» ազգային պարկի եվ դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման եվ քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» N1563-Ն որոշում:

«Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենք (14.12.2001թ.)

ՀՀ կառավարության 27.05.2015թ.-ի N 764-Ն որոշում, որով հաստատվել է շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.3 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1 Ներկա վիճակ . Նախատեսվող գործունեության նկարագիր

Ջրափրկարարական կայանի կառուցումը նախատեսվում է իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Հանգստի գոտի 1-ին փողոց 1/11 հասցեում:

Հողամասի բնութագրերը՝

- Կադաստրային ծածկագիրը՝ 05-004-0046-2066
- Նպատակային նշանակությունը՝ հատուկ պահպանվող տարածքների
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Հանգստի համար նախատեսված
- Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱ ՆՈՒԹՅՈՒՆ

Հողամասը կառուցապատված չէ, ռելեֆ՝ մեղմ թեքությամբ:

Հողատարածքի հարևանությամբ հասարակական և բնակելի շենք շինություններ չկան:

Հողատարածքում ծառահատումներ չի իրականացվելու, հողակտորի կառուցապատման ենթակա հատվածում ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Ըստ իրականացված ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների տարածքում հողաբուսաշերտը բացակայում է, հետևաբար հողաբուսաշերտի պահպանման միջոցառումներ չի նախատեսվում:

Նախատեսվող ջրափրկարարական կայանի շենքի տարածքում, ըստ իրականացված «Ինժեներա-երկրաբանական պայմաններ» հաշվետվության, տեղադրված բնահող-ապարների ֆիզիկա-մեխանիկական բնութագրերի գնահատման նպատակով, համաձայն ՇՆՀ 1-2.101-2002-ի 8.2 աղյուսակի պահանջների, իրականացվել է թվով հինգ, վեց մետր խորությամբ հորատանցքերի հորատում: Հորատանքները փորվել են ապագա կառույցի չորս անկյուններում և կենտրոնական մասում, որոնցից ստացված տվյալների հիման վրա առանձնացվել են բնահող-ապարների հինգ հիմնական տեսակներ՝ Դաշտային և լաբորատոր փորձարկումների արդյունքում արձանագրված հիմնական ֆիզիկա-մեխանիկական բնութագրերը շերտերի նկարագրության հետ միասին բերվում է ստորև ներկայացվող տեսքով: Բնահող-ապարների առանձին շերտերի շինարարական մշակման խմբերը տրված են համաձայն ՇՆԿ IV-2-82-ի 1-ին և 3-րդ ժողովածուներից:

Շերտ N1 Առավելագույնը 10սմ հզորությամբ, կապակցված, միջին ամրության կրային խեցեքարերի և լճային ծագման տարհատիկ ավազների իրար վրա նստած դարսաշերտեր:

Շերտի հզորությունը 0.4-1.2 մ

Տեսակարար կշիռը 2.3-2.5 գ/սմ³

Ծավալային կշիռը 1.6-1.8 գ/սմ³

Ներքին շփման անկյունը 23-250

Դեֆորմացիայի մոդուլը 100-120 կգ/սմ²

Թույլատրելի լարումը մինչև 1.3 կգ/սմ²

Սեյսմիկ կարգը III

Շինարարական մշակման խումբը 29բ/30բ - V կարգ

Շերտ N2 Խիստ ծակոտկեն, հոծազանգված, մուգ մոխրագույնից սևին խփող անդեզիտային դացիտներ խոշորաբեկոր նյութի տեսքով:

Շերտի հզորությունը 0.0-5.0 մ և ավելի

Տեսակարար կշիռը 2.7-2.9 գ/սմ³

Ծավալային կշիռը 2.4-2.6 գ/սմ³

Բնական թեքության անկյունը 40-450

Դեֆորմացիայի մոդուլը 400-500 կգ/սմ²

Թույլատրելի լարումը մինչև 5.0 կգ/սմ²

Սեյսմիկ կարգը I

Շինարարական մշակման խումբը 19/20ա - VII կարգ

Շերտ N3 5-15սմ հզորությամբ, լճային ծագման, բաց մոխրագույնից մինչև դարչնա գունավորմամբ խառնավազա-կոպճային և կավակազային նստվածքների իրար հաջորդող դարսաշերտեր (միայն 4-րդ հորատանցքում):

Շերտի հզորությունը 3.0մ

Տեսակարար կշիռը 2.5-2.6 գ/սմ³

Բնական խոնավությունը 18%

Ծավալային կշիռը 1.6-1.7 գ/սմ³

Կմախքի ծավալային կշիռը 1.40 գ/սմ³

Ներքին շփման անկյունը 22-240

Շաղկապման ուժը 0.025 կգ/սմ²

Ծակոտկենությունը 45%

Ծակոտկենության գործակիցը 0.82

Դեֆորմացիայի մոդուլը 80-100 կգ/սմ²

Թույլատրելի լարումը 1.1 կգ/սմ²

Սեյսմիկ կարգը III

Շինարարական մշակման խումբը 27վ/28վ - II կարգ

Շերտ N4 Խայտաբղետ գունավորմամբ (բեժա-մոխրա-դարչնա-շագանակա-գույնից մինչև գորշ սևագույն), չափավոր խոնավությամբ, լճային ծագման ավազանման կավավազների և թեթև փոշենման ավազակավերի իրար հաջորդող դարսաշերտերի 10%-ը գերազանցող կոպճամանրախճային լրացումով:

Շերտի հզորությունը 1.1-4.9մ

Տեսակարար կշիռը 2.66-2.72 գ/սմ³

Բնական խոնավությունը 21%

Ծավալային կշիռը 1.75-1.85 գ/սմ³

Կմախքի ծավալային կշիռը 1.48 գ/սմ³

Ներքին շփման անկյունը 19-210

Շաղկապման ուժը 0.25 կգ/սմ²

Ծակոտկենությունը 45%

Ծակոտկենության գործակիցը 0.82

Դեֆորմացիայի մոդուլը 60-80 կգ/սմ²

Թույլատրելի լարումը 0.9 կգ/սմ²

Սեյսմիկ կարգը III

Շինարարական մշակման խումբը 33վ/33վ - II կարգ

Շերտ N5 Հրաբխածին ծագման տարբեր ապարների (անդեզիտներ, բազալտներ, դալիտներ) մասամբ խարամացված խճաքարային նստվածքներ մոտ 35-45% գորշ մոխրագույնից մինչև աղյուսա-կարմրավուն գունավորում ունեցող խարամների և տարահատիկ խարամային ավազի լրացումով:

Շերտի հզորությունը 4.5մ և ավելի

Տեսակարար կշիռը 2.55-2.65 գ/սմ³

Ծավալային կշիռը 1.70-1.90 գ/սմ³

Ներքին շփման անկյունը 26-280

Դեֆորմացիայի մոդուլը 240-270 կգ/սմ²

Թույլատրելի լարումը մինչև 3.0 կգ/սմ²

Սեյսմիկ կարգը II

Շինարարական մշակման խումբը 12/13 - V կարգ

Համաձայն ՀՀ տարածքի հավանական սեյսմիկ վտանգի գոտիավորման քարտեզի (ՀՀՇՆ 20.04.2020) աշխատանքների շրջանն ընդգրկված է 2-րդ սեյսմիկ գոտում:

Ջրափրկարարական կայան

Սույն նախագիծն իրականացվել է հիմք ընդունելով սեփականության վկայականը՝ 05082020-05-0085, պատվիրատուի առաջադրանքը և Սևան համայնքի ղեկավարի կողմից տրված նախագծային թույլտվությունը :

Համաձայն նախագծի նախատեսված է Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում, Սևանա լճի ափին կառուցել ջրափրկարարական կայան :

Նախատեսվող ջրափրկարարական կայանը իրենից ներկայացնում է 3 հարկանի շինություն, ստորգետնյա /նկուղային/ հարկ չի նախատեսվում:

Համաձայն նախագծի նախատեսված է, որ ջրափրկարարական կայանը իրականացնել երկաթբետոնե կոնստրուկցիաների միջոցով, ե/բ սյուների ու հեծանների դասավորությունները ցուցադրված են գծագրերում, իսկ իրականացման կարգը ցուցադրված է նախագծի կոնստրուկտիվ հատվածում: Տանիքը երեք մակարդակով, միաթեք, կազմակերպված ջրահեռացմամբ, նախատեսվում է իրականացնել սենդվիչ պանելներով և

մետաղական կապերի կիրառմամբ, իսկ մետաղական էվակուացիոն աստիճանների տանիքը պրոֆիլավոր թիթեղով:

Կիրառվող թիթեղների հաստությունը նվազագույնը 0,6 մմ է: Տանիքի և պատերի մեկուսացումը պետք է լինի շարունակական՝ ջերմային խզումները վերացնելու համար:

Մետաղական տանիքը եւ սենյակիչ պանելներով տանիքը պետք է ունենան 25 տարվա երաշխիք:

Բոլոր ալյումինե նյութերը պետք է մեկուսացված լինեն բետոնից: Տանիքի բոլոր կառուցվածքային փայտե տարրերը մշակել կոնսերվանտներով բետոնի հետ շփման հատվածներում:

Արտաքին բոլոր նյութերը պետք է պարունակեն ուլտրամանուշակագույն ճառագայթման ինհիբիտորներ:

Յուրաքանչյուր դուռ և դռան սարքավորում, ինչպես նաեւ պատուհանները եւ պատուհանների սարքավորումները ներկայացված է դռան եւ պատուհանների մասնագրերի էջերում:

Ներքին պատերը նախատեսված է ներկել 2 շերտ լատեքսային ներկով: Ներկը պետք է լինի առանց կապարի, ջրադիմացկուն:

Բոլոր զուգարաններում, լոգարաններում, ցնցողարաններում, լվացքատանը, հանդերձարաններում պատերն իրականացնել ջնարակված կերամիկական սալիկներով հատակից մինչև առաստաղ: Լոգարանների, զուգարանների, հանդերձարանների բոլոր պատերը 1(մեկ) մետր բարձրությամբ հիդրոմեկուսացնել: Պատի կերամիկական սալիկներ իրականացնել պատուհանագոգերի վրա բոլոր սենյակներում որոնց պատերն իրականացվել են կերամասալերով: Սալիկները պետք է ունենան 30x30 սմ չափսեր 3 մմ հաստությամբ:

Սանհանգույցների քանակն ու բաշխումն իրականացվել է հիմք ընդունելով անձնակազմի քանակը, սեռերի քանակը և ՀՀ ՔՇ 10 դեկտեմբեր 2020 թ. N 95-Ն հրամանը ՀՀՇՆ 31-03 նորմերը փոփոխելու մասին հրամանը:

Հատակների սալիկները կիրառել չսահող տեսակի:

Կերամասալ կիրառվող բոլոր սենյակներում կերամասալերի կարերը լցնել համապատասխան հերմատիկ քսուկով և չկիրառել սիլիկոն:

Սենյակների հատակների եւ առաստաղների իրականացման նյութերն ու կարգը ցուցադրված է գծագրերում:

Շինության պատումն իրականացված է բլոկներով և ջերմամեկուսիչ նյութերով, իսկ հարդարումը ցեմենտավազային սվաղով և ֆասադային ներկանյութով ներկումով, շինության ստորին հատվածը երեսպատված է բազալտե սալերով:

Ներքին դռները նախատեսված են փայտե, իսկ սանհանգույցներում դռները պետք է լինեն լրացուցիչ մշակված ու խոնավակայուն, մի շարք դռներ ունեն չեզոք օդափոխության բացվածքներ:

Տարածքը նախատեսված է ցանկապատել մետաղական ցանկապատով: Առկա են կայանատեղիներ բակային տարածքում, որոնցից 6-ը արտակարգ իրավիճակների համար նախատեսված մեքենաների համար են և ևս 20 կայանատեղի որոնց թվում 3-ը նախատեսված

են հաշմանդամություն ունեցող անձանց մեքենաների համար: Ավտոկայանատեղին նախատեսվում ասֆալտապատել:

Կոյուղաջրերը նախատեսված են հավաքել ինքնամաքրվող կայանում, որի տեղակայման վայրը ցուցադրված է գլխավոր հատակագծով:

Կիրառվող նյութերը շինարարությունից առաջ անհրաժեշտ է համաձայնեցնել պատվիրատուի հետ:

Նախատեսվող շինության հեռավորությունը Սևանա լճից՝ 41.2 մ, մաքրման կայանի /նիշ՝ 1905.36 հեռավորությունը՝ 32.7մ, ավելի պատկերավոր ներկայացված է 1.5 բաժնում:

Շինության տեխնիկական տվյալները հետևյալն են՝

Շինության 0-ական նիշը գտնվում է ծովի մակարդակից 1907 մ բարձրությամբ:

Հողամասի մակերես՝ 5000 քմ,

Կառուցապատման մակերես՝ 304.6 քմ (6.1 տոկոս),

Ճանապարհներ և մայթեր՝ 1556 քմ (31 տոկոս),

Կանաչապատ տարածքներ՝ 3140.4 քմ (62.9 տոկոս),

Շինարարական ընդհանուր մակերեսը կազմում է 715 քմ:

Շինության առավելագույն բարձր կետի բարձրությունը սեփական 0-ական նիշից 12.35 մ է, հողի հետ հատման նվազագույն նիշից՝ 13.5մ, ծովի մակարդակից՝ 1919.35 մ:

Կառուցապատման հետագա գործառնություններն, ինչպես նաև նախագծային առաջիկա աշխատանքներն կիրականացվեն ՀՀ գործող օրենսդրության, ՀՀ կառավարության որոշումներով սահմանված կարգերին և նորմատիվատեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

1.3.2 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր

Սևանի ջրափրկարարական կայանի կոյուղու, տաք և սառը ջրերի համակարգերի նախագծումը իրականացվել է տեղական նորմերի և շինարարության կանոնակարգերի համաձայն: Շենքի ջրամատակարարման համակարգը սպասարկվում է գոյություն ունեցող ջրատարից:

Շենքի ներսում ջրամատակարարման համակարգը իրականացվելու է պոլիպրոպիլենային ճնշման PPR-CW 20-50մմ հաստության մեկուսացված խողովակներով:

Տաք ջրի աղբյուր է հանդիսանում գազի կաթսան, որը տեղադրված է առաջին հարկի մեխանիկական սենյակում : Սանիտարական դրենաժը PVC Ø50 և 110 մմ դրենաժային խողովակների ինքնահոս համակարգ է:

Կոյուղու ելքով կեղտաջրերը թափվում են բակում տեղադրված դիտահոր, որից 160 մմ տրամագծով կոյուղու խողովակներով միացվում է նոր տեղադրվող կենսաբանական մաքրման կայանին:

Կոյուղի

Սևանի ջրափրկարարական կայանի համար նախատեսված է ներքին սանիտարական համակարգ և արտաքին կոյուղու համակարգ, որն իր մեջ ներառում է կենսաբանական մաքրման կայանի տեղադրում:

Մաքրման կայանի մաքրած ջրերը նախատեսվում են օգտագործել բակային հատվածի ռոռզման համար իսկ ավելցուկային ջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված անջրթափանց սեպտիկ հոր, որտեղից ըստ պահանջի պարբերաբար կտեղափոխվի հատուկ մեքենայի միջոցով :

Կոյուղու ներքին ցանցը իրականացված է de50-110 մմ տրամաչափի կոյուղու պոլիէթիլենե խողովակներից՝ ռետինե սեղմիչ օղակներով: Կոյուղու կանգնակների վրա նախատեսված են ստուգիչներ: Կոյուղու թողարկները պոլիէթիլենե խողովակներով միացվում են կոյուղու բակային ցանցին:

Կոյուղու մաքրման կայան

Շահագործման փուլում կեղտաջրերի հեռացման նպատակով տեղադրվելու է ռուսական արտադրության *Greenline «16»* տեսակի մաքրման կայան: *Greenline «16»* տեսակի կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանը (ՄԿ) նախատեսված է տնտեսական կենցաղային կեղտաջրերի վնասագերծման համար: Առաջարկվող մաքրման կայանի արտադրողականությունն ըստ տեխնիկական պարամետրերի կազմում է 16 մ³/օր և կարող է սպասարկել 55-60 մարդու: Այն ունի բարձր հուսալիություն և աղմուկի շատ ցածր մակարդակ: Կայանի աշխատանքը ավտոմատացված է և շահագործման ընթացքում չի պահանջվում պրոֆեսիոնալ գիտելիքներ: Մաքրման համակցված մեթոդը (կենսաբանական և մեխանիկական) հնարավորություն է տալու կեղտաջրերի եռաստիճան և քառաստիճան՝ մինչև 94% մաքրում, պահպանելով շրջակա միջավայրի աղտոտումը կեղտաջրերից և ապահովել մարդկանց առողջության անվտանգության երաշխիքը:

Նախատեսված մաքրման կայանը իրենից ներկայացնում է անջրթափանց, պլաստիկ տարողություն, որի արդյունքում կայանից դուրս է գալու անհոտ և անհամ տեխնիկական ջուր, կայանի ելքում ապահովվելով մաքրված կեղտաջրերի հետևյալ ցուցանիշները:

Կայանը համապատասխանում է ՌԴ ՏՊ–4859–002–54899623–2003 պահանջներին և լայն կիրառություն ունի Ռուսաստանում, Բելառուսիայում և այլ երկրներում: Նշված ցուցանիշները համապատասխանում են ՀՀ կառավարության 2021 թվականի հուլիսի 22-ի՝ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N75-Ն՝ «ԿԱԽՎԱԾ ՏԵՂԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ՝ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 1211-Ն որոշման պահանջներին՝ Սևանա լճի ջրհավաք ավազանի համար սահմանված նորմերին:

Համաձայն *Greenline «16»* տեսակի կենսաբանական մաքրման կայանի տեխնոլոգիայի՝ այն ապահովված է չորս աստիճանի մաքրման համակարգով (թթվածնային և ոչ թթվածնային), որն ապահովելու է կեղտաջրերի բարձրաստիճան մաքրում, հատկապես ֆոսֆորի և ազոտի միացությունների հեռացման համար և կտրուկ նվազեցնում է նստվածքի քանակը: Մաքրված կեղտաջրերը (94%) թույլ կտա կայանից դուրս եկող ջուրը օգտագործել կանաչապատ տարածքի ռոռզման նպատակով:

Օդափոխման բաքում առաջանում է ակտիվացված տիղմ, որը կառուցվածքով շատ նման է գետի տիղմին և արժեքավոր պարարտանյութ է: Այն ժամանակ առ ժամանակ հեռացվելու է մասնագիտական կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ընկերությունը կարող է տեղադրել նաև կեղտաջրերի նույնատիպ մաքրման աստիճան ապահովող այլ տեսակի մաքրման կայան:

1.3.3 Ջեռուցում և օդափոխություն

Ջեռուցման համակարգ

Ջրափրկարար կայանի ջեռուցման համակարգը կտրամադրվի ցածր ջերմաստիճանի ջեռուցման ջրի միջոցով, որն առաջանում է մեխանիկական սենյակում տեղակայված բնական գազով աշխատող նոր տաք ջրի կաթսայի միջոցով և ամբողջ շենքում մատակարարվում է նոր տեղադրված ռադիատորներին: Տարածքում գործում է կենտրոնացված ջեռուցման համակարգ, իսկ ջեռուցման համար այս տարածքին անհրաժեշտ է 35կՎտ հզորություն:

Ջեռուցման համակարգը հաշվարկվում է ըստ ջերմային կորուստների և յուրաքանչյուր սենյակի ջերմաստիճանի պահանջների: Սենյակների ներսի ջերմաստիճանը՝ դիտարկվում է ըստ գերակշռող նորմերի և հաճախորդների պահանջների, բնութագրերի՝ $+18^{\circ}\text{C}$ - $+22^{\circ}\text{C}$

Տարածքում ջերմային բեռները բաշխվել են ըստ սենյակների ջեռուցման պահանջների: Սենյակներում ջերմաստիճանի վերահսկումն իրականացվում է ռադիատորների համար նախատեսված թերմոստատի միջոցով, որը սենյակի ներսում օդի ջերմաստիճանի մասին տեղեկատվությունը փոխանցում է ռադիատորին և դրա հիդրավլիկ միավորին: Հիդրավլիկ միավորը բաղկացած է ջերմամատակարարման խողովակաշարերի թերմոստատիկ փականներից:

Համակարգի տեսակի ընտրությունը համաձայնեցվել է հաճախորդի հետ Ջեռուցման համակարգում գործակալն օգտագործել է ջուր, որը հաշվարկել է $80/60^{\circ}\text{C}$ ընդունված ջերմաստիճանը ջեռուցման ժամանակահատվածում: Խողովակները նախատեսված են առաստաղի տակ անշարժ և շարժական սեղմիչներով ամրացնելու համար՝ հաշվի առնելով խողովակների ընդլայնման գործոնը: Խողովակաշարերը, որոնց արտաքին տրամագիծը D25-ից մինչև D65 ներառյալ, նախատեսվում է պատրաստել պոլիպրոպիլենից: Ռադիատորի տեսակի ընտրությունը կատարվում է՝ ելնելով հիգիենիկ նորմատիվային և ներքին, հարմարավետ շահագործման պահանջներից:

Խողովակաշարերի մեկուսացումը նախատեսվում է ռետինե նյութից 19 մմ հաստությամբ ինքնասոսնձվող մեկուսիչով:

Օդափոխություն

Բնական օդափոխությունը կապահովվի գործող պատուհանների և դռների միջոցով:

Օդափոխման համակարգը կազմակերպված է զուգարաններից: Զուգարանի արտանետումները միանում են իրար և հեռանում տեղից մեկ լիսեռով: Օդափոխիչը տեղադրված է տանիքին:

Շորանները կմեկուսացվեն 10 մմ հաստությամբ ռետինե մեկուսիչով: Խողովակների համակարգի նախագծումը և արտադրությունը կհամապատասխանեն Միջազգային մեխանիկական օրենսգրքին: Բոլոր օդային ընդունարաններում և արտանետվող օդի ելքերում կտրամադրվեն միջատների էկրաններ, անձրևից պաշտպանող փեղկեր և կափույրներ:

Հրդեհային անվտանգության կանոնների ապահովման նպատակով տրամադրվում են հակահրդեհային փականներ: Աղմուկի նվազեցման պլանավորման համար:

1.3.4 *Էլեկտրամատակարարում*

Ընդհանուր առմամբ, շենքի էլեկտրամատակարարումը իրականացվում է տարածքում գործող ՀէՑ ՓԲԸ-ին պատկանող ՏԵ- տրանսֆորմատորային ենթակայանից:

Ցածր լարման հիմնական էնկտրական վահանակը տեղադրված է էլեկտրական վահանակների սենյակում, և ՇԿՎ-ն կաթսայատանը:

Էլ. էներգիայի սնող ցանցի լարումը 300/220Վ է, հաճախականությունը՝ 50Հց: Ենթակայանից հիմնական սնուցման մալուխը մտնում է հիմնական էլեկտրական վահանակներում միաձույլ պատյանով, ջերմամագնիսական խզիչով ավտոմատ անջատիչներում:

Էլեկտրական էներգիայի հիմնական հաշվիչը տեղադրված է ՏԵ-ի ցածր լարման հիմնական էլեկտրական վահանակում: Բաշխիչ վահանակները մոնտաժված են տեխ. սենքում և խոհանոցի պատի վրա:

Համաձայն ПУЭ-ի նախագծվող շինության սպառիչները պատկանում են էլեկտրամատակարարման 1-ին, 2-րդ կարգին

Էլեկտրաէներգիայի 2-րդ կարգի հիմնական սպառողներն են՝

- Օդափոխիչ համակարգի շարժիչները:
 - Էլեկտրական լուսավորումը (ներքին և արտաքին);
- 1-ին կարգին պաշտպանվող էներգիայի սպառողներն են՝
- Վթարային և վակուացիոն լուսավորումը:
 - Հակահրդեհային և անվտանգության ազդանշանային համակարգը:
 - Տեսահսկողություն (անվտանգություն):

Էլ. էներգիայի բաշխումը օդափոխության սարքավորումներին իրականացվում է տեղադրված համապատասխան բաշխիչ վահանների В/1/МСС1 օգնությամբ:

Էլեկտրաէներգիայի բաշխումը սպառիչներին իրականացվում է վաքերով, առաստաղի տակով, պատերով ուղղաձիգ հատվածներում, ինչպես նաև կախովի առաստաղի վերնամասով, պղնձե մալուխներով և հաղորդալարերով:

1.3.5 *Կանաչապատման աշխատանքներ*

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել խոտածածկի /գազոն/ տեսքով:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումը իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Կանաչապատ տարածքների ոռոգումն ջրամատակարարումը նախատեսվում է իրականացնել մաքրման կայանից դուրս եկող մաքուր ջրով և տարածքում նախատեսվող

խորքային հորից, որի համար ըմկերությունը օրենքով սահմանված կարգով կդիմի ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն, ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:

1.3.6 Կանաչ տարածքի ոռոգման ջրապահանջի հաշվարկ

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/մ²:

Տեղանքի շոգ կլիմայական պայմանների համար ընդունում ենք առավելագույն արժեքները.

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006 \text{ մ}^3/\text{մ}^2$

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 3140.4 \text{ մ}^2$,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, $K = 1$

t – ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 90$ օր

$$W_{u.3} = (0.006 \times 3140.4) \times 1 \times 90 = 1695.8 \text{ մ}^3/\text{տարի}$$

1.3 Աղմուկ և թրթռում:

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն՝ ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Ավտոմեքենաների և սարքավորումների աշխատատեղերում աղմուկի մակարդակը 80 դԲ (A) գերազանցելու դեպքում աշխատողները պետք է օգտագործեն անհատական պաշտպանական միջոցներ (գլխարկներ, ականջակալներ և այլն): Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը, աշխատակիցների վրա աղմուկի ազդեցությունը կրելու է կարճատև և ժամանակավոր բնույթ:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում են համապատասխան բնապահպանական միջոցառումներ, որոնց կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր:

Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում հողային աշխատանքների իրականացնելիս 2 էքսկավատորներ և 1 կռունկ, իսկ շենքի կառուցման ընթացքում 3 ամրակապովի և մեկ ավտոմոբիլային կռունկ: Հաշվարկը առված է ենթադրելով, որ այս շին.տեխնիկան շահագործվում միաժամանակ յուրաքանչյուր շինարարության փուլում՝ աղմուկի առավելագույն արժեքը հաշվարկելու համար:

Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ22-04-2014

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» շինարարական նորմերի:

Հաշվարկները կատարված են հետևյալ բանաձևով՝

$$L = L_w + 10 \cdot \lg \left(\frac{\chi \Phi}{\Omega r^2} + \frac{4}{kB} \right)$$

Հողային աշխատանքների փուլ

Տրված տվյալներ

- Էքսկավատորի CAT 320 ձայնային հզորություն (L_{w1})՝ 99 դԲ
- Կռունկ LIEBHERR LTM 1100-4.2 ձայնային հզորություն (L_{w2})՝ 100 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$ (մոտ դաշտի ազդեցության գործակից)
- $\Phi = 1$ (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$ (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$ (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$ (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Էքսկավատորի աղմուկի մակարդակ՝ $L_{w1} = 99 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1 / (2 \cdot \pi \cdot 50^2) + 4 / 1 \cdot 200)) = 99 + 10 \cdot (-16.98) = 82.02$ դԲ
- Կռունկի աղմուկի մակարդակ՝ $L_{w2} = 100 + 10 \cdot \log_{10} ((1 \cdot 1 / (2 \cdot \pi \cdot 50^2) + 4 / 1 \cdot 200)) = 100 + 10 \cdot (-16.98) = 83.02$ դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$$L_{A_{\text{էկվ}}} = 10 \cdot \log_{10} (2 \cdot 10^{\{82.02/10\}} + 10^{\{83.02/10\}}) = 10 \cdot \log_{10} (2 \cdot 10^{\{8.202\}} + 10^{\{8.302\}}) = 87.15 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երկու

էքսկավատոր և մեկ կռունկ միաժամանակ աշխատանքում դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 87.15 դԲ:

Շենքերի կառուցման փուլ

Տրված տվյալներ

- Կռունկ QTZ 160 ձայնային հզորություն (L_{w1})՝ 105 դԲ
- Հեռավորություն (r)՝ 50 մետր

Հաշվարկի համար անհրաժեշտ գործակիցներ

- $\chi = 1$ (մոտ դաշտի ազդեցության գործակից)

- $\Phi = 1$ (աղմուկի ուղղվածության գործոն՝ համաչափ ճառագայթման համար)
- $\Omega = 2\pi$ (կիսագունդային ճառագայթման տարածություն բացօթյա տարածքի համար)
- $k = 1$ (ձայնային դաշտի հավասարաչափ բաշխման խախտման գործակից)
- $B = 200$ (սենյակի ձայնագիտական հաստատունը՝ մ²)

Յուրաքանչյուր սարքավորման աղմուկի մակարդակը հետևյալն է՝

- Կոունկ աղմուկի մակարդակ՝ $L_{w1} = 105 + 10 * \log_{10} ((1 * 1 / (2 / \pi * 50^2) + 4 / 1 * 200) = 105 + 10 * (-16.98) = 88.02$ դԲ

Աղմուկի մակարդակների համատեղումը հետևյալն է՝

Երբ մի քանի աղմուկի աղբյուրներ կան, դրանք համադրում ենք հետևյալ բանաձևով՝

$$L_{A_{\text{էկվ}}} = 10 * \log_{10}(3 * 10^{\{88.02/10\}}) = 10 * \log_{10}(3 * 10^{\{8.802\}}) = 92.79 \text{ դԲ}$$

Այսպիսով, շինարարական հրապարակում հողային աշխատանքների ժամանակ երեք կոունկ միաժամանակ աշխատանելու դեպքում համակցված աղմուկի մակարդակը 50 մետր հեռավորության վրա կազմում է 92.79 դԲ:

Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը 7850 կգ/մ³:

Շինության պատերը հանդիսանում են միաժամանակ նաև աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևյալ բանաձևով.

$$L_{\text{աղ}} = 23 * \lg * m_{\text{է}} - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^3$$

$$L_{\text{աղ}} = 13 * \lg * m_{\text{է}} - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^3$$

Որտեղ $m_{\text{է}} = K * m$ - մակերեսի խտության էկվիվալենտն է,

m - մակերեսի խտությունն է, կգ/մ³,

K - գործակից է, որի հաշվի է առնում մետաղական պատնեշի խտությունը, որը 7850 կգ/մ³

$$m_{\text{է}} = 7850 * 1 = 7850$$

$$L_{\text{աղ}} = 23 * \lg * m_{\text{է}} - 13 = 23 * \lg(7850) - 13 = 23 * 3.894 - 10 = 89.562 - 10 = 79.56 \text{ դԲ}$$

Շինարարական հրապարակից դուրս աղմուկի մակարդակը կազմում է՝

Հողային աշխատանքների փուլ

$$L_{A_{\text{տար}}} = L_{A_{\text{էկվ}}} - L_{\text{աղ}} = 87.15 - 79.56 = 7.59 \text{ դԲ}$$

Շենքերի կառուցման փուլ


$$L_{A_{\text{տար}}} = L_{A_{\text{էկվ}}} - L_{\text{աղ}} = 92.79 - 79.56 = 13.23 \text{ դԲ}$$


Մոտակա բնակելի շինությունների ներսում աղմուկի մակարդակը հողային աշխատանքների փուլում կկազմի 7.59 դԲ, իսկ շենքերի կառուցման փուլում՝ 13.23 դԲ, ինչը նորմայից բավականին ցածր է:


Աշխատանքները իրականացվելու են միայն ցերեկային ժամերին:

1.4 Իրավիճակային հատակագիծ











General Plan /
Մ 1:500

Գլխավոր Հատակագիծ

ՀԻՆ. ԻՆՃ. ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Հայաստանի Հանրապետություն
Բ. Երևան, Բաակովի 11ա, 375082
Հեռ./ֆաքս: +(374 1) 562980
E-mail: cesco@arminco.com

CESCO Ltd.

11a Isakov Str., Yerevan, 375082,
Republic of Armenia.
Tel/Fax: +(374 1) 562980
E-mail: cesco@arminco.com

Director:
Shoplin.

Architect:
Սարգսյան Կարապետյան
R. Karapetyan

Structural engineer:
Կոնստրուկտոր Բեգիջյան
G. Bezirjanyan

CAP:
ՆԳՃ

No	ամսաթիվ date	ստորագրում revision

Address: m. Gegharkunik,
co. Sevan Recreation
zone 1st street 1/11

Հասցե՝ մ. Գեղարքունիք,
համայնք Սեան Գանգուտի
գոտի 1 – ին փողոց 1/11

Contract #

TO:
Սրացի անվանում:
Project title:

Water Rescue Station
Construction
Sevan, Armenia
Ջրափրկարարական
Կայանի Կառուցման
Աշխատանքային
Նախագիծ

Project Number:
AM-HA-2020-00041382
Drawing index: A

General Plan /
Գլխավոր
Հատակագիծ

Scale

1:500

ԵՐԵՎԱՆ YEREVAN,
2024

Ներքին համար:
Drawing number:
6

Խմբեր:
Drawings:
77

«Համաձայնեցված է»

Նշաններ /
Legend

Buildings / շինություններ

Green Area / կանաչապատում

Road / ճանապարհ

Concrete Pavement / բետոնե մակերես

Kerbstone / եզրաքար

Direction of water flow / ջրի հոսքի ուղի

Water Reservoir / ջրի ռեզերվուար

Water Drain / ջրազատ


water line / ջրագիծ


gas line / գազատար

electricity line / էլ. հաղորդակցական

street lamp / արտաքին

պողոտային





1.6 Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակացույց

ՇԻՆ. ԻՆՃ. ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Հասցե: Երևան, Բունյաթի 1 եռ. 375082
Հեռ.Ֆաքս: +374 10 562980
E-mail: cesco@armenia.com

CESCO ՍՊԸ

11a Isakov Str., Yerevan, 375082,
Republic of Armenia.
Tel/Fax: +374 10 562980
E-mail: cesco@armenia.com

Դասակարգում:

«Շին. Ինճ. Սերվիս» ՍՊԸ

Ինճ. Ինճ.:

Տեղանք: Հայաստանի Հանրապետություն, Երևան, Բ. Կարաբաճ

Տեսչական կետ:

Նախագիծ:

CAP:

1/4-6

No	Կատարվել է	Կատարվել է

Address in English: cesco, co.
Sevan, Republic of Armenia, Yerevan, 375082
1/1/1

Հայաստանի Հանրապետություն
Երևան, Հայաստանի Հանրապետություն
1/1/1

Հայաստան

TO:

Սերվիսի անվանում:

Project title:

Water Rescue Station
Construction
Sevan, Armenia
Ջրափրկարարական
Կայանի Կառուցման
Աշխատանքային
Նախագիծ

Project Number:

AM HA 2020 00041382

Drawing index: A

Code Summary,
Construction
Schedule/Նախագիծ
ամփոփագիր,
Շինարարական
Էքզերի Ժամանակացույց

Scale:

Տեսչական
Drawing number:

2

Տեսչական
Drawings:


75

ԵՐԵՎԱՆ, YEREVAN,
2024

Շինարարության ժամանակացույց

Աշխատանքների անվանումը	Շինարարության ժամանակացույց
	24 ամ/հա
Մոբիլիզացիա	
Քանդման աշխատանքներ	
Հիմքերի փորում	
Երկաթբետոնե հիմքերի կառուցում	
Երկաթբետոնե զուսիների և շրջանակների կառուցում	
Տանիքի երկաթբետոնե սալերի կառուցում	
Տանիքի կառուցում	
Ճակատների ջերմամեկուսացում և ներկում	
Ներքին հարդարման աշխատանքներ	
Տարածքի բարեկազմում և կանաչապատում	

1.7 Շինհրապարակի կազմակերպման հատակագիծ



2. ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՍԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԽԵՄԱՆ

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ:

Շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Աշխատանքների բնույթից ելնելով՝ բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2. Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի, աշխատանքների ընդհանրացված փուլի, կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3. Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների, աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ, կոշիկ), շենքի պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում, լուսավորում, օդափոխում, պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն), սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2. Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3 Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի, արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4 Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման, հրահանգման ժամանակին և որակով անցկացման, անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման, արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

2.1 Աշխատանքների կատարման սխեմա

Նախագծի շինարարության կազմակերպումը մշակված է ՀՀՇՆ 3. 01.01.2008-ի դրությամբ: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը 24 ամիս կամ 360 օր: Նախապատրաստական փուլում կատարվում են հետևյալ աշխատանքները.

- Շին. հրապարակի ժամանակավոր ցանկապատում հետիոտն գլխածածկույթով
- Ժամանակավոր էլեկտրոմատակարարում և ջրամատակարարում
- Շին. նյութերի և բետոնի ընդունման հարթակների պատրաստում
- Շին. հրապարակի գիշերային լուսավորվածություն

Հաշվի առնելով տեղանքի սուղ պայմանները, անհրաժեշտ է կազմակերպել անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրությամբ:

Հիմքերի, հեծանների, պուների, ծածկերի և աստիճանների կառուցման համար նախատեսվում է օգտագործել 399,5 մ³ բետոնախառնուրդ: Ապրանքային բետոնը մատակարարվելու է շինհրապարակ պատրաստի տեսքով, մասնագիտացված ընկերության կողմից:

Սևանի ջրափրկարական կայանի նոր շենքի կառուցման համար անհրաժեշտ նյութերի համառոտ ցանկ

1. Ամրան A 500 C
2. Լացված ավազ

3. Խիճ
4. Ցեմենտ
5. Թեթև բետոնե բլոկ 400x200x200
6. Գիպսասովարաթղթե սալիկ
7. Պլաստիկ պատուհաններ
8. Մետաղական դրսի դռներ
9. Փայտյա ներսի դուռներ
10. Ծեփամածուկ
11. Կեղծ առաստաղ
12. Գազի կաթսա
13. Քառակուսի մետաղական խողովակ
14. Ծածկի սենդվիչ պանել
15. Ջեռուցման մետաղական մարտկոց
16. Պլաստիկ ջեռուցման և ջրամատակարարման խողովակներ
17. Մալուխ
18. Լյումենեացնողային լուսատուներ
19. Կերամիկական հատակի և պատի սալիկներ
20. Լատեքսային ներկեր

Ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ իրականացնել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ պահել և ապահովել ոռոգման ջրով:

Թույլ չտալ նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շին. մեքենաները շին. հրապարակ պետք է մտնեն և դուրս գան մաքուր վիճակով:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են Նախնական գնահատման հայտի հաջորդ բաժիններում՝ բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Ստորև ներկայցվում է շինհրապարակի գլխավոր հատակագիծը:

2.2 Նախապատրաստական փուլ

Նախապատրաստական փուլում իրականացվում են՝

- ժամանակավոր ցանկապատում,
- ժամանակավոր ինժեներական ցանցերի տեղադրում,
- պահեստային և մոնտաժային հարթակների կարգավորում,
- ժամանակավոր շինությունների տեղադրում,
- մեքենաների և մեխանիզմների փոխադրում շինհրապարակ,
- բանվորների հրահանգավորում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ,
- անվտանգության նշանների տեղադրում,

- հակահրդեհային միջոցների տեղադրում:

2.3 Շինարարության ժամկետները

Շինարարության տևողությունը որոշվել է ըստ շինմոնտաժային աշխատանքների նորմատիվ աշխատատարության հաշվարկման և դրանց արդյունավետ համատեղման:

Շինարարության տևողությունը կազմում է 24 օրացուցային օր:

Բանվորների առավելագույն քանակը 20 մարդ:

ԻՏԱ անձնակազմ՝ 5 մարդ

2.4 Հիմնական շինարարական մեքենաների և մեխանիզմների պահանջարկը

Հիմնական շինարարական տեխնիկայի պահանջարկը որոշվում է աշխատանքների ծավալների, մեխանիզմների և մեքենաների միջին արտադրողականության և աշխատանքների կատարման ընտրված եղանակների հիման վրա: Հիմնական մեքենաների և մեխանիզմների անվանացանկը բերված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Շինարարական մեքենաների և մեխանիզմների անվանացանկ

Կամագ ավտոկռունկ 53215-15 1 հատ

Կամագ ինքնաթափ 5511 2 հատ

Էքսկավատոր CAT - 434 - 07 1 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

2.5 Հողային աշխատանքներ

Հողային աշխատանքները փոստրակում և խրամուղիներում կատարվում են փոքր հզորությամբ “հետ-բահ” էքսկավատորով:

Անմիջապես հիմքերի տակ հողը մշակվում է ձեռքով, ձեռքի պարզագույն գործիքներով՝ փոքր մեխանիզմներով:

Հողային աշխատանքների ծավալները՝

- հանույթ՝ 600մ³
- հետլիծք՝ 400մ³

Ավելցուկային հողային զանգվածը՝ 200մ³ կտեղափոխվի Սևան համայնքի կողմից օրենքով սահմանված աղբավայր:

2.6 Հիմնական շինարարական աշխատանքների և ռեսուրսների ծավալները

Շինարարական աշխատանքների ընթացում հողային աշխատանքների ծավալը շատ չնչին, այդ իսկ պատճառով ծավալները չի ներկայացվում:

Հանգստի գոտու կառուցապատման ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏՄ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 5 մարդ

N – ԻՏՄ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³/օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 20 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³/օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 360 օր

$$W_{\Sigma} = (5 \times 0.016 + 20 \times 0.025) \times 360 = 208.8 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.58 \text{ մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T \times D, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 5000 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 180

D – ջրցանի օրեկան քանակը, 2 անգամ

$$U_1 = 5000 \times 0.0015 \times 180 \times 2 = 2700 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 5.499 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 2914.56 մ³/շին. ժամ:

Բանվորական և ԻՏՄ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Շինհրապարակում սանիտարական կանոնները և նորմերը պահպանվելուն են համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N15-Ն հրամանի համաձայն:

Անիվների լվացման, ջրցանի, բանվորական և ԻՏՄ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով: Ջրամատակարար ընկերությունը կընտրվի մրցույթային հիմունքներով, շինարարական թույլտվություն ստանալուց հետո:

Խմելու որակի ջուրը շինհրապարակ կմատակարարվի ջրի տարաներով, խմելու ջուր վաճառող ընկերությունից, պայմանագրային հիմունքներով:

Եղանակային տեղումներից /արհեստական առվակների միջոցով/ և անիվների լվացումից առաջացած կեղտաջրերը կուղղվեն դեպի տարածքում նախատեսված պարզարան: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադիր:

2.7 Թափոնների կառավարում

Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները և քանակները՝

	Անվանումը	Վտանգավորության դասը	Ծածկագիրը ըստ «Թափոնների ցանկի»	Քանակը, ամբողջ շինարարության համար
1.	Շինարարական աղբ	IV	9120060101004	300մ ³
2.	տարածքում առաջացած կենցաղային չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	IV	9120040001 00 4	120մ ³
3.	Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող	V	31401100 08 99 5	200մ ³
4.	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ	IV	35131100 01 00 4	3 մ ³
	Չտեսակավորված ալյումինի ջարդոն	V	35310101 01 99 5	2 մ ³
5.	Յուղերով աղտոտված ավազ	III	31402303 04 03 3	5 մ ³
6.	Պողպատե եռակցման էլեկտրոդների մնացորդներ և կիսալրուկներ	IV	35121601 01 99 5	0.1տ

Բոլոր առաջացող թափոնների համար շին. հրապարակում նախատեսված են լինելու պահման հարթակներ, իսկ որոշ թափոնատեսակների համար նաև կոնտեյներներ: Շինարարական աղբը որոշակի քանակներ կուտակվելուց հետո հեռացվելու տեղական

ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված աղբավայր: Եռակցման խարամը փոքր քանակներով խառնվելու է կենցաղային աղբի հետ և նույնպես հեռացվելու է աղբավայր:

Սև և գունավոր մետաղները նույնպես հավաքվելու են շին. հրապարակում և պարբերաբար հանձնվեն մասնագիտացված ընկերությունների:

Բնակելի շենքի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱՍ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

3.1 Նախատեսվող գործունեության տարածքի ֆիզիկա-աշխարհագրական նկարագիրը և լանդշաֆտը

Սևանի ավազանի ավիամերձ տարածքները բնորոշվում են ռելիեֆի տիպիկ հրաբխային կառուցվածքով: Տարածաշրջանում ռելիեֆը բլրաշատ ափսեաձև իջվածքներով է, թույլ բլրակային, աննշան կոնաձև իջվածքներով: Ռելիեֆի այսպիսի ձևերը օժանդակում են մթնոլորտային տեղումների արագորեն ներծծվելուն և մակերեսային հոսք համարյա չի ձևավորվում: Ջրի հատակից դուրս եկած առափնյա շերտը կազմված է ավազա-կավային և գելենչիկային նստվածքներից:

"Սևան" ազգային պարկի տարածքը բաժանվում է հետևյալ տարածքագործառնական գոտիների՝

- Արգելոցային,
- Արգելավայրային,
- Ռեկրեացիոն,
- Տնտեսական:

3.2 Հատուկ պահպանվող տարածքներ

"Սևան" ազգային պարկը գտնվում է հայկական հրաբխային լեռնաշխարհի հյուսիսային մասում, Երևան քաղաքից մոտ 60 կմ հեռավորության վրա: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22585 հա:

"Սևան" ազգային պարկի տարածքը բաժանվում է 4 տարածքագործառնական գոտիների՝ արգելոցներ, արգելավայրեր, ռեկրեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում կան 4 արգելոցներ՝ "Նորաշենի", "Լիճք-Արգիշի", "Գիլլի" և "Արտանիշի", որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 7464 հա, որից ցամաքային տարածքը՝ 4289 հա, իսկ ջրայինը՝ 3175 հա, 2 արգելավայրեր՝ "Գավառագետի" և "Գիհի-կաղնուտային ռելիկտային", որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 2652 հա, որից ցամաքային տարածքը՝ 2359 հա, իսկ ջրայինը՝ 293 հա, 4753 հա ընդհանուր մակերեսով ռեկրեացիոն և 11266 հա ընդհանուր մակերեսով տնտեսական գոտի:

3.3 Մթնոլորտային օդ

ՀՀ տարածքում մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից:

2023 թվականի ընթացքում մթնոլորտային օդի որակի դիտարկումներ կատարվել են Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Ծաղկաձոր, Կապան, Քաջարան և Չարենցավան քաղաքներում: Որոշվել են մթնոլորտային օդում փոշու, փոշու մեջ մետաղների (մոտ 21 մետաղ), ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի պարունակությունները: Ընդհանուր առմամբ 2023 թվականին կատարվել է մթնոլորտային օդի 33216 նմուշառում, իրականացվել 36012 դիտարկում:

ՊՈԱԿ-ը Սևան համայնքում չունի դիտակայան, չի տեղադրում պասիվ նմուշառիչներ, մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ ՊՈԱԿ-ում տվյալներ չկան:

Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ օգտվելով ՊՈԱԿ-ի «Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները» ժամանակավոր առաջարկություններից:

Սևան բնակավայրի բնակչության թվաքանակը կազմում է 24650 մարդ: Ըստ այդ ուղեցույցի մինչև 10-50000 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են.

- Փոշի՝ 0.095 մգ/մ³;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.006 մգ/մ³;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.033 մգ/մ³;
- Ածխածնի օքսիդ՝ 1.1 մգ/մ³:

3.4 Ջրագրություն

Սևանը Հարավային Կովկասի խոշորագույն, բարձրադիր քաղցրահամ լիճն է, որի ծավալը 33.2 կմ³ է, մակերեսը՝ 1238 կմ²: Լիճը Արտանիշի և Նորատուսի հրվանդանների միջև ձգված ստորջրյա պատնեշով՝ Շորժայի թմբով, բաժանվում է երկու մասի՝ հարավ-արևելյան կամ Մեծ Սևան (20.4 կմ³), հյուսիս-արևելյան կամ Փոքր Սևան (12.8 կմ³): Լճի առավելագույն խորությունը 79.4 մ է (Փոքր Սևան), միջին խորությունը՝ 26.2 մ, ավի շրջագիծը մոտ 230 կմ:

Սևանա լիճ են թափվում 28 գետեր և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան:

Գետերի ավազանների մակերեսների գումարը կազմում է 2780 կմ², իսկ միջավազանային տարածությունը՝ 696.0 կմ²: Գետերի մեծ մասի առավելագույն ելքերը, սովորաբար, դիտվում են գարնանային վարարումների ժամանակ: Սակայն կարող են դիտվել նաև ամառ-աշնանային սակավաջուր փուլի ընթացքում, որի պատճառը այս սեզոնում հաճախակի տեղացող տեղատարափ անձրևներն են: Գետերի մեծ մասն ունի լավ արտահայտված սակավաջրության երկու փուլ՝ ամառ-աշնանային և ձմեռային: Սևանա լճից դուրս է գալիս մեկ գետ՝ Հրազդանը, որի բնական հոսքը մինչև լճի մակարդակի իջեցումը եղել է 110 մլն.մ³ տարեկան: Ներկայումս այս գետը վերածվել է ջրանցքների և ջրատարների մի համակարգի, որով հոսում է Սևանա լճից ոռոգման նպատակներով վերցվող ջուրը:

Սևանի ավազանի հիդրոերկրաբանական պայմանները բնորոշվում են երկրաբանա-կառուցվածքային, գեոմորֆոլոգիական և ֆիզիկա-աշխարհագրական առանձնահատկություններով:

Հիդրոերկրաբանական տեսակետից նախատեսվող գործունեության տարածաշրջանում կան ստորգետնյա գրունտային ջրեր: Տարածաշրջանի մակերևույթային էռոզիան լավ նկատելի է թեք լանջերի վրա: Գարնանային և աշնանային անձրևների ժամանակ առաջանում են հեղեղատներ:

3.4.1 Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր. Հիդրոլոգիական դիտարկումներ

2024 թվականի 4-րդ եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոոդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 9. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2024 թվականի 4-րդ եռամսյակում
 Հոկտեմբեր

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2023թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	11.47	14.26	14.47	40.20	20.7	37.8	57.4
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.86	0.86	0.78	2.50	0.00	7.79	18.8
Տեղումները լճի մակերևույթի վրա	5.00	46.7	3.80	55.5	6.30	42.7	112.3
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.60	12.5
Ընդամենը	19.93	64.42	21.75	106.10	56.6	91.0	166.9
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	21.4	156.0
Գոլորշացում լճի մակերևույթից	52.7	46.2	45.1	144.0	102.0	145.3	178.2
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	53.1	46.6	45.5	145.2	123.1	176.6	300.2
Կուտակում (նվազում)	-25.5	-25.4	-25.5	-76.4	-205.4	-92.2	2.60
Բացարձակ անկապք	-7.67	43.22	1.75	37.30		6.70	
Հարաբերական անկապք %	14.4	48.1	3.70	20.4	0.10	5.90	25.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.52	1278.701	38.2022
Ամսվա վերջին օրը	1900.46	1278.130	38.1258
Միջին ամսական	1900.49	1278.415	38.1640

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.06 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.24 31.10.24 ընթացքում 0.29 (մ)
 31.10.24 և 31.10.23 մակարդակի տարբերությունը 0.22 (մ)

Նույնը

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2023թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճք թափվող գետերով	11.87	11.46	11.54	34.87	24.9	38.4	54.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.62	0.62	0.62	1.86	0.00	8.15	22.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	6.10	4.00	9.60	19.7	0.00	30.9	79.5
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.60	7.80	4.10	6.10	9.90
Ընդամենը	21.19	18.68	24.36	64.23	46.4	82.7	141.1
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	18.2	151.0
Գոլորշացում լճի մակերևույթից	42.6	34.8	24.6	102.0	80.6	116.4	151.5
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	43.0	35.2	25.0	103.2	93.9	142.0	260.1
Կուտակում (նվազում)	-12.8	-12.7	-12.8	-38.3	-218.2	-66.4	8.80
Բացարձակ անկապ	-9.01	-3.82	12.16	-0.67		6.90	
Հարաբերական անկապ %	21.0	10.9	32.7	0.65	0.40	7.00	25.9

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.46	1278.130	38.1258
Ամսվա վերջին օրը	1900.43	1277.845	38.0875
Միջին ամսական	1900.44	1277.940	38.1003

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.03 (մ)

Մակարդակի փոփոխությունը 01.01.24 30.11.24 ընթացքում 0.26 (մ)

30.11.24 և 30.11.23 մակարդակի տարբերությունը 0.23 (մ)

Պատկեր 1

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2023թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում	Նվազ.	միջին	Առավ.
	1	2	3				
ՄՈՒՏՔ							
Լիճր թափվող զետերով	11.23	11.15	12.39	34.77	20.7	36.9	51.4
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	0.62	0.62	0.68	1.92	0.00	7.94	22.9
Տեղումները լճի մակերևույթի վրա	0.10	4.20	7.30	11.6	0.40	22.7	56.4
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	4.20	6.20	7.90
Ընդամենը	14.55	18.57	23.07	56.19	43.1	71.7	108.4
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	19.5	177.0
Գոլորշացում լճի մակերևույթից	28.4	26.3	23.5	78.2	62.9	94.9	113.7
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	28.8	26.7	23.9	79.4	63.0	122.2	240.9
Կուտակում (նվազում)	-12.7	-12.8	-12.7	-38.2	-178.4	-57.3	24.9
Բացարձակ անկապք	-1.55	4.67	11.87	14.99		8.50	
Հարաբերական անկապք %	5.38	14.9	33.2	15.9	0.40	7.70	46.2

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.42	1277.750	38.0748
Ամսվա վերջին օրը	1900.39	1277.464	38.0366
Միջին ամսական	1900.41	1277.655	38.0621

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում -0.03 (մ)
Մակարդակի փոփոխությունը 01.01.24 31.12.24 ընթացքում 0.22 (մ)
31.12.24 և 31.12.23 մակարդակի տարբերությունը 0.22 (մ)

2024

Թվականի հոկտեմբերի 1-ին Սևանա լճի մակարդակը կազմել է 1900.52 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ բարձր է եղել 22 սմ-ով: 2024 թվականի դեկտեմբերի 31-ին լճի մակարդակը կազմել է 1900.39 մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ բարձր է եղել 22 սմ-ով: 2024 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը լճի մակարդակն իջել է 13 սմ-ով:

Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալը հոկտեմբեր ամսին կազմել է 2.498 մլն մ3, նոյեմբերին՝ 1.860 մլն մ3, դեկտեմբերին՝ 1.922 մլն մ3:

Այսպիսով, 2024 թվականին՝ հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ներառյալ Արփա-Սևան ջրատարով Սևանա լիճ տեղափոխված ջրի քանակը կազմել է 185.146 մլն մ3:

2024 թվականին Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողումը սկսվել է հունիսի 16-ից և շարունակվել մինչև սեպտեմբերի 16-ը ներառյալ և, համաձայն Հրազդան ՀԷԿ-ի ջրանցքի Գեղամավան դիտակետի տվյալների, այդ ժամանակահատվածում լճից բացթողնված ջրի գումարային ծավալը կազմել է 131.038 մլն.մ3:


2024 թվականի հոկտեմբերի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1278.701 կմ2, ծավալը 38.2022 կմ3, իսկ դեկտեմբերի 31-ին համապատասխանաբար՝ 1277.464 կմ2 և 38.0366 կմ3:

Սևանա լճի ջրերի որակ



Սևանա լճի ջրի որակի մոնիթորինգն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների 3 դիտակետում՝ տարբեր խորության շերտերում: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի N75-Ն որոշման Հավելված 12.1-ի համաձայն:

Մեծ Սևանի 22-րդ կայանի մոտ մակերևութային, 0.5մ և 5մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 10մ խորության շերտում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), 20մ և 25մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 30մ խորության շերտում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Փոքր Սևանի 4-րդ կայանի մոտ մակերևութային, 0.5մ և 5մ խորության շերտերում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս), 10մ և 20մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 30մ և 55մ խորության շերտերում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին և դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), 70մ և 80մ խորության շերտերում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Փոքր Սևանի Այրիվանքի մոտ մակերևութային, 10մ, 20մ և 30մ խորության շերտերում ջրի որակը երեք ամիսների ընթացքում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 5մ խորության շերտում ջրի որակը հոկտեմբերին և նոյեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), 40մ խորության շերտում ջրի որակը հոկտեմբերին և դեկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):





Գծապատկեր 79. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 80. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 81. Մեծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 82. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

3.5 Հողային ռեսուրսներ

"Սևան" ազգային պարկի տարածքի մեծ մասը կազմում են Սևանա լճից ազատված հողագրունտները: Դրանք ավազային են, թեթև, հումուսի աննշան պարունակությամբ:

Հիմնականում ձևավորվել են հողագրունտի 3 խմբեր, որոնք ունեն հողագոյացման տարբեր ուղղություններ՝ խոնավ մարգագետնային ավազային, թերի զարգացած ավազակոպչային և սապրոքելիտային տափաստանացված: Զգալի տարածք են զբաղեցնում թերի զարգացած ավազակոպչային հողագրունտները: Գետերի հովիտներում և դրանց դարավանդներում ձևավորվել են գետահովտադարավանդային հողերը: "Սևան" ազգային պարկի Գիհի-կաղնուտային ռելիկտային, Սևանա թերակղզու արևելյան և Արտանիշ թերակղզու կենտրոնական ու արևելյան բլրապատ և լեռնոտ հատվածներում հանդես են գալիս լեռնատափաստանային չոր, իսկ 2400 մ և ավելի բարձրություններում՝ լեռնամարգագետնային հողերի տիպերը:

Հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝

- մետաղաձուլական գործարանները,
- արդյունաբերական և կենցաղային թափոնները,
- ժամանակակից գյուղատնտեսությունը,
- տրանսպորտը:

Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Այնուհետև դրանց մի մասը, անցնելով ջրային միջավայր, կլանվում է բույսերի կողմից և հայտնվում սննդային շղթայում: Հողի արդյունաբերական աղտոտման հիմնական աղբյուրներն են մետաղաձուլական գործարանների և արդյունաբերական այլ ձեռնարկությունների թափոնները: Նման աղտոտումները կարող են առաջացնել հողի աղտոտվածություն ծանր մետաղներով (պղինձ, ցինկ, արսեն, կապար, մոլիբդեն, մանգան, նիկել, կադմիում, քրոմ, վանադիում և այլն) և ցիանական միացություններով:

Հողի աղտոտման աղբյուրներից մեկը մթնոլորտն է: Մթնոլորտի վնասակար նյութերը նստում են հողի մակերեսին, թափանցում են գրունտային ջրերի մեջ, իսկ դրանց մի մասն էլ փոշու ձևով վերադառնում է մթնոլորտ:

Մարդու և կենդանիների առողջության վրա բացասաբար են ազդում պարարտանյութերի բոլոր խմբերը, մասնավորապես քլոր պարունակող և ֆոսֆորական պարարտանյութերը:

Ծանր մետաղների կուտակումը հողում կատարվում է ավելի արագ տեմպերով, քան հեռացումն ու չեզոքացումը, որը տևում է հարյուրավոր, նույնիսկ հազարավոր տարիներ:

Գյուղատնտեսական աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ հանքային պարարտանյութերը, թունաքիմիկատները, անասնապահական համալիրները: Հանքային պարարտանյութերի կանոնների խախտման դեպքում մեծանում է հողի թթվայնությունը, փոխվում է հողային օգտագործման օրգանիզմների տեսակային կազմը, խախտվում է նյութերի շրջապտույտը, քայքայվում է հողի կառուցվածքը:

2022 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Գեղարքունիկ, Տավուշ, Կոտայք, Արարատ, Սյունիք, Շիրակ և Արմավիրի մարզերում:

Մարզերի և քաղաքների հողերում մետաղների կոնցենտրացիաների համապատասխան ՍԹԿ-ներից գերազանցման վերաբերյալ տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Մարզ/Քաղաք	Վանադիում	Պղինձ	Ցինկ	Քրոմ	Նիկել	Արսեն	Կադմար
Գերազանցումը համապատասխան ՍԹԿ-ից, անգամ							
Տավուշ	1.3	14.7-35.0	5.9-8.4	7.3-16.2	8.0-10.3	4.0-19.5	-
Կոտայք	1.5-2.0	17.0-46.3	5.1-12.7	4.3-26.7	9.3-28	2.5-10	1.3-2.1
Արարատ	1.2	11.0-14.7	2.9-4.3	8.0-11.3	13.8-17.5	3.5-6.5	-
Վայոց ձոր	1.5-2.9	25.0-74.7	3.5-6.7	1.7-15.3	4.8-13.8	3.5-6.5	1.1-1.4
Լոռի	1.3-7.1	16.4-1760.3	2.6-55.9	1.7-16.2	2.9-19.3	2.5-37.9	1.1-27.6
Գյումրի	1.4-2.4	15.6-24.3	5.4-23.0	1.7-14.3	8.5-18.3	2.5-5	1.2-1.6
Վարդենիս	1.1-2.0	18.0-24.7	5.3-8.9	19.0-42.0	24.3-42	5.5-8.0	1.2-1.3
Մեծամոր	1.5	16.7	6.1	21.8	24.3	7.0	-
Արմավիր	1.1-2.5	20.7-28.7	6.8-9.7	14.2-65.2	32.5-41	4.0-6.5	1.4-2.4
Կապան	1.1-2.2	107.7-213.3	7.7-23.7	1.7-15.7	9.3-17	6.5-12	1.5-10.7
Քաջարան	1.5-1.6	230.3-966.0	6.3-18.5	1.7-7.0	7.0-7.3	10.0-11.5	1.6
Մեղրի	3.2	70.7	5.9	1.7	7.8	7.0	-
Ագարակ	1.8-2.7	140.3-220.3	5.1-11.0	1.7-8.8	4.8-10.5	3.0-5.0	1.3-1.4

3.6 Կլիմայի և օդերևութաբանական պայմանները

Տարածաշրջանի կլիմայի չորային է: Տարվա տաք կեսին դիտվում են նաև խորշակային եղանակներ՝ խոնավության նվազագույն արժեքներով: Ձմեռը չափավոր ցուրտ է, գերիշխում է թույլ սառնամանիքային անհողմ եղանակ: Ձմեռային եղանակային ռեժիմը ձևավորում է մթնոլորտի յուրովի թթվածնային ռեժիմ, դիտվում են թթվածնի կշիռային պարունակության մաքսիմում արժեքներ, որոնք աստիճանաբար նվազում են ըստ բարձրության: Ձմռան սեզոնում լիճը ծածկվում է սառույցով, և լճի ջրային ավազանի ազդեցությունը ավամերձ ցամաքի թերմիկ ռեժիմի վրա զգալի նվազում է: Ամռանը գերակշռում է "արևոտ չափավոր խոնավ" եղանակային տիպը՝ նվազագույն տեղումների քանակով, որոնք ուղեկցվում են նաև ամպրոպային երևույթներով: Ամառը տաք է, չոր և անհողմ: Գարնանից ամառ անցումը տեղի է ունենում աստիճանաբար՝ շնորհիվ լճի ջրային ավազանի ազդեցության: Տարածաշրջանը լանդշաֆտային, եղանակա-կլիմայական, միկրոկլիմայական պայմաններով շահավետորեն տարբերվում է մյուսներից: Տարածքը բաց է և չի էկրանավորվում բարձր լեռնազանգվածներով:

Աղյուսակ 6. Օդի միջին ջերմաստիճանը

Քնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Քացարձակ նվազագույն, °C	Քացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Մևան լճային	-5.3	-5	-1.7	4	8.7	12.9	16.1	16.3	13.1	8.2	2.4	-2.7	5.6	-32.5	32.9
Մևան քաղաք	-8.2	-7.4	-3.3	3.5	8.8	12.1	15.7	15.7	12.2	6.4	0.6	-5.5	4.2	-33.0	32

Աղյուսակ 7. Օդի հարաբերական խոնավությունը

Քնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը. %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը. %	
														Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		74	74	65	72
Մևան լճային	74	74	73	72	73	73	74	72	71	69	70	73	72	74	65	72	63
Մևան քաղաք	81	80	77	72	73	72	70	68	65	69	76	82	74	81	75	70	53

Աղյուսակ 8. Մթնոլորտային տեղումները

Քնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական օրական առավելագույն մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
Մևան լճային	18	24	38	64	89	78	54	37	33	47	31	18	531	129	402
	22	23	37	30	43	41	43	52	37	36	31	16	52		
Մևան քաղաք	25	30	40	65	103	79	50	40	37	51	38	25	583	158	425
	21	26	26	52	46	45	43	74	44	59	50	26	74		

Աղյուսակ 9. Ջրան ծածկույթը

Քնակավայրի անվանումը	Ջրան ծածկույթը			
	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ նմանաձևությամբ օրերի քանակը	Ջրան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
Մևան լճային	71	121	-	-
Մևան քաղաք	93	136	252	114

Աղյուսակ 10. Քամու ցուցանիշները

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անդրորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Գերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հունիսին, մ/վ	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագությունները առավելագույնը ըստ ուղղությունների
		Միջին արագությունը, մ/վ													
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս- արևմտյան						
Մևան քաղաք	Հուն.	3	2	2	2	1	7	58	25	13	4.2	Արլ	3.2	Արմ	5.4
		4.1	4.0	3.3	2.7	2.9	5.3	5.4	3.7						
	Ապր.	5	9	23	8	4	16	28	7	20	3.3				
		3.9	3.7	3.2	2.5	3.8	6.3	5.5	3.4						
	Հուլ.	18	35	31	6	3	2	3	2	17	3.1				
		4.7	4.1	3.2	2.7	2.1	2.5	3.1	2.8						
	Հոկտ.	7	5	7	3	4	15	45	14	33	2.7				
		4.0	3.8	2.7	2.2	2.3	5.3	4.3	2.7						

3.7 Կենսաբազմազանություն

3.7.1 Բուսական աշխարհ

Մևանի ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են՝ մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրները: Նախատեսվող գործունեության տարածաշրջանը հիմնականում տափաստանային է, տափաստաններին բնորոշ բուսականություն հատկաբուսականության գերակշռությամբ, բլրի արանքներում և քարակույտերի մոտ թփերի և առանձին ծառերի առկայությամբ:

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է "Մևան" ազգային պարկի տարածքում:

Ազգային պարկում և դրա պահպանական գոտում հայտնի են շուրջ 60 բուսատեսակներ, որոնք օգտագործվում են կամ կարող են օգտագործվել որպես դեղաբույսեր: Շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի: Պարկի և դրա պահպանական գոտու տարածքից հայտնի են նաև 267 տեսակի, ենթատեսակի և ձևերի մակրոմիցետներ (պարկի տարածքում՝ 121 տեսակ, պահպանական գոտում՝ 228 տեսակ): Նշված մակրոսկոպիկ սնկերից շուրջ 100 տեսակը ուտելի են, որոնցից առավելապես տարածված են հետևյալները՝ ականջասունկ սովորական կամ կախասունկ (*Pleurotus ostreatus*), յուղասունկ հատիկավոր (*Suillus granulatus*), շեկիկ (*Lactarius deliciosus*), աղվեսասունկ (*Cantharellus cibarius*), կոճղասունկ մարգագետնային (*Marasmius oreades*), շամպինյոն սովորական (*Agaricus campestris*), շամպինյոն դաշտային (*Agaricus arvensis*), գոմաղբասունկ սպիտակ, փրչոտ (*Coprinus comatus*), շարքասնկերից (*Tricholomataceae*)՝ կոճղասունկ աշնանային (*Armillaria mellea*), լեպիստա մանուշակագույն ոտիկով (*Lepista personata*), շարքասունկ հողամոխրագույն (*Tricholoma terreum*): Բացի այդ, հանդիպում են նաև 58 տեսակի մակրոսկոպիկ սնկեր,

որոնք ունեն բուժիչ հատկություններ: 24 տեսակի սնկեր թունավոր են: Դրանցից են՝ խոզուկասունկ (Paxillus involutus), կեղծ կոճղասունկ (Hypholoma fasciculare), ճանճասպան հովազային (Amanita pantherina), շամպինյոն 1411 դեղնամաշկ (Agaricus xanthodermus), գոմաղբասունկ թեփուկավոր (Coprinus picaceus), սարդոստայնասնկեր (Cortinarius), թելիկասնկեր (Inocybe), շարքասնկեր (Tricholoma) ցեղերի որոշ տեսակներ և այլն:

Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ: Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովող թփուտները՝ ցածրաճ գլիուտներ (Juniperus depressa) և այլն: Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները ներկայացված են ստորև Աղյուսակ 9 - ում: Աղյուսակում ընդգրկված բույսերի որոշ տեսակները ներկայացված են Նկար 8 - ում:

Աղյուսակ 9. Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները

№	Բույսի հայերեն անվանումը	Բույսի լատիներեն անվանումը
1	Ազնվամորի	Rubus idaeus
2	Աղվեսագի եղեգանման	Alopecurus arundinaceus
3	Անթառամ ոսկեգույն	Helichrysum callichrysum
4	Ասպիրակ աղեղնեզր	Spiraea crenata
5	Արոսենի սովորական	Sorbus aucuparia
6	Գառան դմակ մեծ	Sedum telephium
7	Գերիմաստի	Viburnum lantana
8	Դաշտավլուկ սոխուկակիր	Poa bulbosa
9	Դժնիկ լուծողական	Rhamnus cathartica
10	Եղինջ երկտուն	Urtica dioica
11	Թրաշուշան կովկասյան	Gladiolus caucasicus
12	Լավատեր թուրինգիական	Lavathera turingiaca
13	Լոշտակ սպիտակ	Bryonia alba
14	Խատուտիկ Ստեմենի	Taraxacum stevenii
15	Կորենի սովորական	Berberis vulgaris
16	Կակաչ արևելյան	Papaver orientale
17	Կակաչ հայկական	Papaver armeniacum
18	Կակաչ սակավատերև	Papaver paucifoliatum
19	Կատվաղաղձ մերկ	Nepeta nuda
20	Կատվաղաղձ Մուսինի	Nepeta mussini
21	Կատվախոտ դեղատու	Valeriana officinalis
22	Յագարատերևունկ սովորական	Achillea millefolium
23	Յիրիկ փոքր	Iris pumila
24	Մատիտեղ ճնճուկի	Polygonum aviculara
25	Մատուռնի ուղիղ	Potentilla recta
26	Նեղտերևի	Chamaenerium angustifolium
27	Շուշանաբանջար սոխուկավոր	Chaerophyllum bulbosum
28	Շուշանաբանջար ոսկեգոծ	Chaerophyllum aureum
29	Պտեր արական	Dryopteris filix mas
30	Սեզ սպիտակ	Agrostis alba
31	Սիզախոտ մարգագետնային	Phleum pratense
32	Սրոհունդ ալպիական	Hypericum alpestre

№	Բույսի հայերեն անվանումը	Բույսի լատիներեն անվանումը
33	Սրոհունդ խոցված	<i>Hypericum perforatum</i>
34	Սրոհունդ մշտիկատերևանման	<i>Hypericum hyssopifolium</i>
35	Մաարենի Զրաչի	<i>Rosa hrachiana</i>
36	Մաարենի առատափուշ	<i>Rosa spinosissima</i>
37	Վիկ մկան	<i>Vicia cracca</i>
38	Տանձենի կովկասյան	<i>Pyrus caucasica</i>
39	Տուղտավարդ թավրիզյան	<i>Alcea tabrisiana</i>
40	Փրփրուկ վեցաթերթ	<i>Filipendula hexapetala</i>
41	Օշինդր արևելյան	<i>Artemisia orientalis</i>
42	Օշինդր դառը	<i>Artemisia absinthium</i>

Նկար 8. Տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները



Տուղտավարդ թավրիզյան - *Alcea tabrisiana*



Սրոհունդ մշտիկատերևանման - *Hypericum hyssopifolium*



Վիկ մկան - *Vicia cracca*



Լավատեր թուրինգիական - *Lavatera turingiaca*



Միզախոտ մարգագետնային - *Phleum pratense*



Փրփրուկ վեցաթերթ - *Filipendula hexapetala*



Մատիտեղ ճնճղուկի - *Polygonum aviculare*



Ասպիրակ աղեղնեղ - *Spiraea crenata*



Կակաշ արևելյան - *Papaver orientale*



Կատվադաղձ Մուսիկի - *Nepeta mussini*

Տարածաշրջանում լայն տարածում ունեն Ագնվամորու (*Rubus idaeus*), Վարդ առաստափուշի (*Rosa spinosissima*), Մասրենի Հրաչի (*Rosa hrachiana*) և Ասպիրակ աղեղնեղի (*Spiraea crenata*) մացառուտները, որոնց արանքներում հանդիպում են Ծորենի սովորականը (*Berberis vulgaris*) և Լոշտակ սպիտակը (*Bryonia alba*): Տարածաշրջանում հանդիպում են նաև՝ Տանձենի կովկասյան (*Pyrus caucasica*), Թրաշուշան հայաստանյան (*Gladiolus hajastanicus* Gabrielian) և Դժնիկ լուծողական (*Rhamnus cathartica*) ծառեր: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են գիհու և կաղնու անտառների հիմնական խմբավորումները: Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 10- ում:

Աղյուսակ 10. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված հազվագյուտ, անհետացող բուսատեսակները

№	Բուսատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁴
	Հայերեն	Լատիներեն	
1	Անողնուցուկ Գրոսհեյմի	<i>Puccinellia grossheimiana</i> V.I.Krecz.	EN
2	Արոսենի հայաստանյան	<i>Sorbus hajastana</i> Gabr.	VU

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության վայրը գտնվում է "Սևան" ազգային պարկի տարածքում: Այս հատվածը գտնվում է մարդածին ազդեցության ներքո և կիրառվում է որպես հանգստյան գոտի: Նախատեսվող գործունեության տարածք կարճաժամկետ այցելության և ուսումնասիրության ընթացքում հազվագյուտ, Կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չեն հանդիպել:

3.7.2 Կենդանական աշխարհ

Տարածաշրջանի այս հատվածը ներկայացված է բավականի լայն տարածված հարուստ կենսաբազմազանությամբ, ինչպես նաև մի քանի կարմիրգրքային տեսակներով: Կենդանիների կարմիրգրքային տեսակները տարածված են հիմնականում պահպանված չխախտված բնական տարածքներում և չինգիլների մոտ: Տարածաշրջանում ամենատարածված և բազմաքանակ կենդանիներն են մկնաման կրծողները և մանր թռչնատեսակներ, որոնք հանդիսանում են գիշատիչ թռչունների և կենդանիների, այդ թվում կարմիրգրքային կենդանատեսակներից որոշների համար որպես կերային օբյեկտներ: Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները ներկայացված են ստորև Աղյուսակ 11-ում: Աղյուսակում ընդգրկված կենդանիների որոշ տեսակները ներկայացված են Նկար 10-ում:

Աղյուսակ 11. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները

№	Կենդանու հայերեն անվանումը	Կենդանու լատիներեն անվանումը
1	Թխակապույտ աղավնի	<i>Columba livia</i>
2	Ժուլան	<i>Lanius collurio</i>
3	Լոր	<i>Coturnix coturnix</i>
4	Խայտաբղետ քարկեռնեխ	<i>Monticola saxatilis</i>
5	Յոպոպ	<i>Upupa epops</i>
6	Մեծ ճուռակ	<i>Buteo buteo</i>
7	Մոխրագույն ագռավ	<i>Corvus corone</i>
8	Մոխրագույն արտույտ	<i>Calandrella rufescens</i>
9	Մոխրագույն կաքավ	<i>Perdix perdix</i>
10	Ոսկեգույն մեղվակեր	<i>Merops apiaster</i>
11	Պարող քարաթռչնակ	<i>Oenanthe isabellina</i>
12	Ջրածիծառների տեսակներ	<i>Chlidonias</i>
13	Սև կեռնեխ	<i>Turdus merula</i>
14	Սևաճակատ շամփրուկ	<i>Lanius minor</i>
15	Սևավիզ քարաթռչնակ	<i>Oenanthe finschii</i>
16	Սովորական կաչաղակ	<i>Pica pica</i>
17	Սովորական հողմավար բազե	<i>Falco tinnunculus</i>
18	Սովորական ճայ	<i>Corvus monedula</i>
19	Սովորական որոր	<i>Larus ridibundus</i>
20	Սովորական սարյակ	<i>Sturnus vulgaris</i>
21	Սովորական սիսեղ	<i>Sitta europaea</i>
22	Սովորական քարաթռչնակ	<i>Oenanthe oenanthe</i>
23	Տափաստանային արտույտ	<i>Melanocorypha calandra</i>
24	Փռփուլավոր արտույտ	<i>Galerida cristata</i>
25	Աղվես	<i>Vulpes vulpes</i>
26	Աքիս	<i>Mustela nivalis</i>
27	Գորշուկ/ Փորսուղ	<i>Meles meles</i>
28	Դաշտամկներ	<i>Microtinae</i>
29	Համստեր	<i>Cricetus cricetus</i>
30	Ձյան դաշտամուկ	<i>Chionomys nivalis</i>
31	Նապաստակ	<i>Lepus europaeus</i>
32	Գայլ	<i>Canis lupus</i>
33	Շնագայլ	<i>Canis aureus</i>
34	Քարակզաքիս	<i>Martes foina</i>

Նկար 10. Տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները



Լոր - *Coturnix coturnix*



Մոխրագույն ագռավ - *Corvus corone*



Թխակապույտ աղավնի - *Columba livia*



Մովորական հողմավար բազե - *Falco tinnunculus*



Հուպուպ - *Upupa epops*



Մովորական սիտեղ - *Sitta europaea*



Աքիս - *Mustela nivalis*



Դաշտամկներ - *Microtinae*



Լապաստակ - *Lepus europaeus*



Համստեր - *Cricetus cricetus*

Տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ կարմիր գրքում և ԲՊՄՄ Կարմիր ցուցակում գրանցված 5 կենդանատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 12-ում, իսկ դրանցից որոշների լուսանկարները՝ Նկար 11-ում:

Աղյուսակ 12. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող՝ ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված կենդանատեսակները

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Հայերեն	Լատիներեն	
1	Հարթ խխունջ	Gyraulus laevis	EN
2	Մոխրաայտ սուզակ	Podiceps grisegena Boddaert	VU
3	Թշան կարապ	Cygnus olo	VU
4	Մոխրագույն սագ	Anser anser	VU
5	Խայտաբաղ	Tadorna tadorna	VU
6	Լայնակտուց բաղ	Anas clypeata Linnaeus	VU
7	Սպիտակաճակատ սագ	Anser albifrons	VU

№	Կենդանատեսակ		ԲՊՄՄ-ի Կարմիր ցուցակում ունեցած կատեգորիան ⁶
	Հայերեն	Լատիներեն	
8	Կարմիր ցին	Milvus milvus	EN
9	Սպիտակապոչ արծիվ	Haliaeetus albicilla Linnaeus	EN
10	Գիշանգլ	Neophron percnopterus Linnaeus	EN
11	Տափաստանային արծիվ	Aquila nipalensis orientalis Hodgson	VU
12	Աղավնաբազե	Falco columbarius Linnaeus	DD
13	Սապսան	Falco peregrinus Tunstall	VU
14	Հայկական որոր	Larus armenicus Buturlin	VU
15	Ներկարար	Coracias garrulus	VU

EN (Endangered) - վտանգված տեսակ

VU (Vulnerable) - խոցելի տեսակ

ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված են նաև մոխրագույն մեղու (Anthophora cinerea Frieze), Պորչինսկու իշամեղու (Bombus portshinskii Radoszhkowski) տեսակները:

Ինչպես արդեն նշվել է, նախատեսվող գործունեության վայրը գտնվում է "Սևան" ազգային պարկի տարածքում՝ ավիամերձ հատվածում: Այս հատվածը գտնվում է մարդածին ազդեցության ներքո և կիրառվում է որպես հանգստյան գոտի:

ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N 71-Ն որոշման՝ Գեղարքունիքի մարզ (ք. Սևանի մոտակայք) հայտնի է Իշամեղու ձնափայլ (Bombus niveatus Kriechbaumer) խոցելի տեսակը:

Տեսակի առանձնյակների հանդիպման դեպքում կիրականացվեն պահպանության միջոցառումներ:

3.8 Պատմամշակութային և բնության հուշարձանները

Գեղարքունիքի մարզի բնակավայրերը հարուստ են պատմամշակութային ժառանգությամբ, որը խթան է հանդիսանում այդ մարզում զբոսաշրջության և ռեկրեացիոն գործառույթներն առավել զարգացնելու համար: Հանրապետության տարածքում գտնվող հուշարձաններն ըստ արժեքավորման չափանիշների դասակարգվում են հանրապետական և տեղական նշանակության:

ՀՀ Կառավարության 2003թ. հունվարի 9-ին թիվ 80-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակի համաձայն :

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում:

Աղյուսակ 13. համայնքի պատմամշակութային հուշարձանները

հուշարձան	կառուցված	հավելյալ նշումներ
Գլխատուն	19.	կառուցել է Սարգիս Մանուկյանը
Գլխատուն	19.	Վարազդատ Պողոսյանի տան մոտ
Գլխատուն	19.	Անդրանիկ Մելիքյանի տան մոտ
Գյուղատեղի Գանձավանք (, Անգիր վանք)	917դ.	Սևան-Գավառ ճանապարհի ձախ կողմում
Եկեղեցի Գանձավանք (, Անգիր վանք)	910դ.	գյուղատեղիի աե կողմում, կիսավեր
Դամբարանադաշտ , Գեղունի	մ.թ.ա. 32հզ	Սևանա լճի հս-ամ ափին
Դամբարանադաշտ Լճաշենի	մ.թ.ա. 21հզ	Սևան-Գավառ հին ճանապարհի ձախ կողմում
Եկեղեցի Սբ. Հռիփսիմե	7դ.	
Խաչքար	1011դ.	ազուցված հվ պատին, արտաքուստ
Խաչքար	1112դ.	ազուցված ամ պատին, արտաքուստ
Խաչքար	13.	Եկեղեցու ներսում
Խաչքար	1415դ.	բեմի ճակատին, ձախից 1ինը

հուշարձան	կառուցված	հավելյալ նշումներ
Խաչքար	15 ^{դ.}	բեմի ճակատին, աջից 3-րդը
Խաչքար	15 ^{դ.}	ազուցված հվ պատին, մուտքից ձախ, արտաքուստ, արձանագիր
Խաչքար	1516 ^{դ.}	ազուցված ամ պատին, արտաքուստ, արձանագիր
Խաչքար Քիրմանի	1516 ^{դ.}	հվ ավանդատանը
Խաչքար	1557 ^{դ.}	բեմի ճակատին, աջից 5-րդը, թվակիր
Խաչքար Քիրմանի	1564 ^{դ.}	բեմի ճակատին, աջից 4-րդը
Խաչքար	16 ^{դ.}	ազուցված մուտքից ձախ, բեկոր, արձանագիր
Տապանաքար	1718 ^{դ.}	հենած բեմի ճակատին
Տապանաքար Սահակի	1707 ^{դ.}	ավանդատանը, պահպանվել է 2բեկորով
Գերեզմանոց	1020 ^{դ.}	եկեղեցու շուրջը
Խաչքար	10 ^{դ.}	եկեղեցուց հս, հենած տապանաքարին
Խաչքար	1314 ^{դ.}	եկեղեցուց հս-աե, դրված հորիզոնական դիրքով որպես տապանաքար
Խաչքար Վարդանի	15 ^{դ.}	ընկած գետնին
Խաչքար	16 ^{դ.}	ընկած գետնին, արձանագիր
Տապանաքար	1516 ^{դ.}	եկեղեցուց 2մ հս
Տապանաքար Նուրբեկի	1594 ^{դ.}	
Տապանաքար	16 ^{դ.}	եկեղեցու հվ պատի մոտ, արձանագիր, կոտրված
Տապանաքար	1617 ^{դ.}	եկեղեցուց 1մ հս
Տապանաքար	1617 ^{դ.}	եկեղեցուց ամ
Տապանաքար	1617 ^{դ.}	
Տապանաքար Հովսեփի	1617 ^{դ.}	եկեղեցուց հս-աե
Տապանաքար Սարգսի	1668 ^{թ.}	եկեղեցուց հս
Տապանաքար Թուխձամի	1688 ^{թ.}	եկեղեցուց հս-աե
Տապանաքար պարոն Գրիգորի	1698 ^{թ.}	եկեղեցուց հս-աե
Տապանաքար Փարու	17 ^{դ.}	եկեղեցուց հս-աե
Տապանաքար	17 ^{դ.}	եկեղեցուց հս-աե, արձանագիր
Տապանաքար Մելքումի	1704 ^{դ.}	եկեղեցուց հս-աե
Տապանաքար Բեկիջանի	1702 ^{թ.}	եկեղեցուց հս-աե
Տապանաքար պարոն Գասպարի	1703 ^{թ.}	եկեղեցուց հս-աե
Տապանաքար Ղազարի	1705 ^{թ.}	
Տապանաքար Ղազարի	1707 ^{թ.}	եկեղեցուց հս-ամ

հուշարձան	կառուցված	հավելյալ նշումներ
Տապանաքար	1737.	եկեղեցուց ամ, արձանագիր
Տապանաքար Ամիրի	1746	եկեղեցուց հս-աե
Խաչքար	910դ.	Վաղո Մանուկյանի տան մոտ գտնվող նորաշեն սրբատեղիում, բեմին
Խաչքար	10դ.	բարձունքի վրա, հենած ժայռաբեկորի
Խաչքար	16դ.	կանգնեցված գետնին, Երկրորդ աշխարհամարտում զոհված մարտիկների հուշարձանի մոտ
Խաչքար	1617դ.	Մուրադ Կարապետյանի տան մոտ գտնվող նորաշեն սրբատեղիում
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին		
Մատուռ Սբ. Գևորգ	վրկնգ՝ 1914.	
Խաչքար	910դ.	ազուցված հվ պատին, ներքուստ, ստորին մասը չի պահպանվել
Խաչքար	910դ.	բեմին, 6խաչքարերից ձախից 1-ինը, վերնամասը՝ չի պահպանվել
Խաչքար	998.	բեմին, 6խաչքարերից ձախից 2-րդը պատվիրատու՝ Գրիգոր
Խաչքար	10դ.	գլխավայր ազուցված հվ պատին, ներքուստ, ջարդոտված
Խաչքար	1011դ.	հենած հս պատին, ստորին ձախ անկյունը՝ կոտրված
Խաչքար	1011դ.	բեմին, 6խաչքարերից աջից 1-ինը
Խաչքար	11դ.	բեմին, 6խաչքարերից աջից 3-րդը
Խաչքար	1213դ.	ազուցված հվ պատին, ներքուստ
Խաչքար	1213դ.	բեմին, 6խաչքարերից աջից 2-րդը
Խաչքար	1213դ.	բեմին, 6խաչքարերից ձախից 3-րդը
Խաչքար	1415դ.	հենած հս պատին, մուտքի մոտ
Գերեզմանոց	915դ.	մատուռի շուրջը, նեղ ճանապարհով բաժանվում է 2հատվածների
Խաչքար	12դ.	պատվանդանին
Խաչքար	1213դ.	մատուռի աե պատի մոտ, կանգնեցված գետնին
Խաչքար	1314դ.	եզրերը՝ վնասված
Խաչքար	1415դ.	կերտված ժայռաբեկորին
Մատուռ Թուխ Մանուկ	1920դ.	գործող գերեզմանոցի տարածքում

հուշարձան	կառուցված	հավելյալ նշումներ
Խաչքար		մատուռի ներսում, եռատված
Վանական համալիր , Կարմիր վանք	920դ.	գյուղի եզրին, գերեզմանոցի հին թաղումների տարածքում
Եկեղեցի	910դ.	1-ին եկեղեցի, ավերված
Գավիթ	1012դ.	ավերված
Եկեղեցի	մզնդ	2րդ եկեղեցի, ավերված
Խաչքար	1112դ.	տեղահանված
Մատուռ	19դ.	
Խաչքար	910դ.	մատուռի բեմին
Խաչքար	13դ.	մատուռի բեմին
Գերեզմանոց	920դ.	մատուռի շուրջը
Խաչքար	910դ.	հենած քարաբեկորին
Խաչքար	964.	պատվանդանին պատվիրատու՝ Գրիգոր Բարակավիզ
Վիմագրություն. Արգիշտի Ա-ի արձանագրությունը	մ.թ.ա. 776.	պահպանվում է ուղղանկյուն կառույցի ներսում, փոստի շենքի մոտ

Թվարկված պատմամշակութային հուշարձաններից ոչ մեկը չի գտնվում նախատեսվող գործունեության տարածքում:

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն:

Աղյուսակ Գեղարքունիքի մարզի բնության հուշարձանները

1	«Սևկատար» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 20 կմ արլ
2	«Աժդահակ» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքից 25 կմ հվ-արմ
3	«Անանուն» ծալքավորում	Գեղարքունիքի մարզ, Սևանա լճի հս-արլ ափին, երկաթուղու պաստառի հատվածում, Սևան քաղաքի մոտ 45 կմ հեռավորության վրա
4	«Քարե ծով» քարացրոններ (չինգիլներ)	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ դեպի խարամային քարհանք
5	, Անանուն հրաբխային արտահայտված շերտավորություն	Գեղարքունիքի մարզ, Լճաշեն գյուղից 1 կմ հվ, հրաբխային խարամների գործող քարհանքի մոտ
6	«Արմաղան» հրաբուխ	Գեղարքունիքի մարզ, Մադինա գյուղից 3.5 կմ արմ
7	«Հայրավանք» բրածո ֆաունա	Գեղարքունիքի մարզ, Հայրավանք գյուղից 2-3 կմ հս-արլ
8	Թառ (Կարմիր Կատար)	Գեղարքունիքի մարզ , հրաբուխ երկրաբանական հուշարձան

Ջրաերկրաբանական հուշարձաններ

5.	, Սարանցե աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում, ծ.մ-ից 1937 Բարձրության վրա
6.	, Խաչերիե աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Գավառ քաղաքի արմ ծայրամասում
7.	, Արցունք քարե աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Ակունք գյուղի տարածքում, ծ.մ-ից 1980 Բարձրության վրա
8.	, Անանունե աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Լճավան գյուղի տարածքում, ծ.մ-ից 2045 Բարձրության վրա
9.	, Անանունե աղբյուր	Գեղարքունիքի մարզ, Կարճաղբյուր գյուղի հվ-արլ եզրին, ծ.մ-ից 1930 Բարձրության վրա
10.	, Վանքի աղբյուրե աղբյուրների խումբ	Գեղարքունիքի մարզ, Սարուխան գյուղի հվ ծայրամասում, ծ.մ-ից 1977 Բարձրության վրա

Ջրագրական հուշարձաններ

13.	, Ակնաե լիճ	Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն գյուղից 10 կմ արմ, Ակնասար լեռան լանջին
-----	-------------	--

Կենսաբանական հուշարձաններ

4.	, Ենթալայան մարգագետինե	Գեղարքունիքի մարզ, Դրախտիկ գյուղի մոտ
----	-------------------------	---------------------------------------

4 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված աշխատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

Նախատեսվող Հանգստի գոտու կառուցապատման կառուցման համար հայցվող տարածքը Սևանա լճի կենտրոնական ազդեցության գոտում, հետևաբար հայտում նկարագրվող աշխատանքների ընթացիկ և հետագա փուլերում անհրաժեշտության դեպքում պետք է նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ բացառելով որևէ բացասական ազդեցություն Սևանա լճի վրա:

4.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

4.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում

- դիզեյային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

4.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

4.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

1) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:

2) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ:

3) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով:

4) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս: Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները:

5) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ:

6) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով:

7) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով:

8) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:

9) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ:

4.3.2 Ջրային ռեսուրսներ

Սևանա լճի վրա հնարավոր ազդեցությունները մեղմելու նպատակով կառուցապատումը կատարվելու է առաջնորդվելով ՀՀ ջրային օրենսգրքի և ջրային ոլորտին առնչվող իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելու, ինչպես նաև Սևանա լիճ վտանգավոր նյութերի արտահոսքը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- բացառել Սևանա լճի բնական էկոհամակարգի խախտումները,

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:
- անձրևաջրերը և անիվների լվացման հոսքաջրերն ուղղորդվելու են պարզարարան, պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադր:
- բացառվելու է տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացումը շինհրապարակում,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համայնքում գործող մասնագիտացված կետերում,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,

4.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադրից:

4.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները

- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործման, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովվելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

4.3.5 *Հակահրդեհային միջոցառումներ*

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

դ) անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակ թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք, խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին, անդորրի պայմաններում դադարեցնել շինարարական տեխնիկայի աշխատանքը:

4.3.6 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

4.3.7 Թափոնների կառավարում

Հանգստի գոտու կառուցապատման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ պահելու թափոնների կուտակումներից
- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը:

- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը
- բացառել տարածքում թափոնների բաց այրումը

Հանգստի գոտու կառուցապատման կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3.8.1 *Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր*

Նախատեսվող գործունեության տարածքները բավականին ուրբանիզացված են: Նախատեսվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել: Այդուամենայնիվ, շինարարական աշխատանքների ժամանակ ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է.

- 1) Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով, առանձնացնել պահպանվող գոտիներ:
- 2) Ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, երե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացման ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը, տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրել համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով: Աշխատանքները կիրականացվեն ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանող որոշման (31 հուլիսի 2014 թվականի N 781-Ն) հիմնադրություններին համապատասխան:
- 3) Շինարարական և հողային աշխատանքներ իրականացնելու ժամանակ օգտագործվելու է ջրցան՝ փոշենստեցման նպատակով, ինչը աղտոտումից կպահպանի օդային ավազանը և բնական էկոհամակարգերը, մասնավորապես տեղի բուսականությունը:
- 4) Որպես կանոն կենդանիները ակտիվ են վաղ առավոտյան և իրիկնամուտին, իսկ որոշ տեսակներ ակտիվ են բացառապես գիշերային ժամերին: Որոշ կենդանատեսակներ շատ զգայուն են աղմուկի նկատմամբ, ուստի կենդանիների կեսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար նախատեսվում ցանկացած աղուկ առաջացնող գործողություն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին (շինարարական աշխատանքներ, տրանսպորտի տեղաշարժ և այլն):

5) Կենդանիների բնականոն վարքին կարող է խանգարել նաև տարածքի գիշերային լուսավորությունը, մասնավորապես այն տեսակների, որոնք ակտիվ են գիշերը, լուսադեմին կամ մթնշաղին: Ուստի նախատեսվում մաքսիմալ նվազեցնել տարածքի լուսավորությունը:

5 ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

Հանգստի գոտու կառուցապատման շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ
5. Կենսաբազմազանության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մասնահանել ամբողջ շինարարության ընթացքում 950 հազ. դրամ:

Շինարարական աշխատանքների ընթացքում կիրականացվեն մշտադիտարկումներ ուղղված շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուի պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով. (b) շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ. (c) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով. (d) օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները (e) հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ. (f) ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով. (g) շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով: (h) պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում: (i) շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ :
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում

		(b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Բանվորկան և ԻՏՍՄ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր բիոզուգարաններ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն: (b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:

72

կենսաբազմազանության պահպանություն	անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ	աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար; - շինարարական տեխնիկայի տեխաշարժը իրականացնել միայն գոյություն ունեցող ճանապարհներով, - կառուցապատման ենթակա տարածքը ցանցապատել, փոշու արտանետումները կանխելու և հարակից տարածքների բուսական տեսակների վրա ազդեցությունը մեղմելու նպատակով - նվազեցնել ազդեցությունը բույսերի վրա՝ հողային աշխատանքների հիմնական մասը պլանավորելով և իրականացնելով վեգետացիոն ոչ ակտիվ ժամանակաշրջանում. - ապահովելու են անհրաժեշտ պայմաններ, որպեսզի հանված բուսահողը չխառնվի գրունտի հետ և չաղտոտվի , - ջրային և հողմնային հողատարումից գերծ պահելու համար պահեստավորված հողաթմբերը ծածկվում են խոտաբույսերով կամ իրականացվում են այլ միջոցառումներ՝ հողաթմբերի ամրացում, ծածկում և այլն: - բուսահողի պահեստավորման համար ընտրվելու է շինարարական հրապարակից դուրս տեղակայված վայր: - շինարարության ավարտից հետո հանված բուսահողը օգտագործվելու է տարածքի կանաչապատման նպատակով: - կառուցապատումից ազատ տարածքում նախատեսվում է իրականացնել կանաչապատում համաձայն կանաչապատման նախագծի:
--	---	--

		- Կանաչապատումը կիրականացվի առաջնորդվելով ՀՀ կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով: վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմին: 2) բուսատեսակների այլ աճելավայրեր ապօրինի տեղափոխման և այդ տարածքում այլ տեսակների կլիմայավարժեցման կանխարգելում. 3) կենսաբանական տեխնոլոգիաների միջոցով ստացված կենդանի ձևափոխված օրգանիզմների ապօրինի օգտագործման և օտարածին տեսակների ներմուծման կանխարգելում. 4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում: Կենդանական աշխարհի վրա հնարավոր ազդեցությունը նվազագույնի հասցնելու նպատակով ամենաինտենսիվ շինարարական աշխատանքները կիրականացվեն ձվադրման և բնադրման ժամանակաշրջանից (ապրիլ-մայիս) դուրս: Կենդանական աշխարհի վրա ազդեցությունը մեղմացնելու նպատակով բացառել՝ - գիշերային ժամերին մեքենամեխանիզմների լուսավորությամբ կամ այլ լուսավորության կիրառմամբ աշխատանքները - տրանսպորտային շարժն ԱՊ-ում՝ հատկապես Պարկի պահպանության օբյեկտ հանդիսացող կարևոր կենդանատեսակների բազմացման շրջանում - շինարարական աշխատանքները ԱՊ-ի պահպանման գոտու այն տեղամասերում, որոնք հանդիսանում են կարևոր կենդանատեսակների բնադրավայրեր կամ միգրացիոն ուղիներ
--	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Օդի որակի հսկում	- ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով. - շինարարական հրապարակից դուրս եկող տրանսպորտային միջոցների անվադողերը լվանալ. - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը տեղափոխել փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով. - օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս. Շինհրապարակի ջրցանի համար կօգտագործվեն լավագույն	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն

	հասանելի տեխնոլոգիաների և աղտոտող նյութերի արտանետումները փոշենստեցնող (փոշեզսպող) թնդանոթ սարքավորումները. - հղկման աշխատանքներ կատարելիս օգտագործել փոշու արտանետումը բացառող սարքեր և տեխնոլոգիաներ. - ավազը, ցեմենտը, գաջը, խիճը, այլ սորուն նյութերը, հողային զանգվածները, ինչպես նաև շինարարական աղբը պահեստավորել փակ տարածքներում կամ ծածկել անթափանց թաղանթներով. - շինարարական աղբը տեղափոխել դրանց հեռացման համար հատուկ հատկացված վայրեր և հատուկ սահմանված երթուղով: - պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում: - շինարարության ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում կապահովի օդի որակի մոնիթորինգի սարքավորումների առկայությունը՝ առցանց հարթակի հասանելիությամբ, համայնքի կողմից տվյալների ստուգաչափման հնարավորությամբ:				
--	---	--	--	--	--

Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Աղմուկի մակարդակի հսկում	- Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում - Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն: - Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափազրույթներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը, - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում, աղմուկի մակարդակի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն

	վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;				
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Մասնագիտացված ընկերություն	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու
Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տարածքի Կանաչապատում, բարեկարգում	Տեղանքին բնորոշ ծառաթփային բուսականության թփերի և այլ բուսականության նորմալ աճ	Կառուցապատվող հողամաս	Կանաչապատման բոլոր տեղամասերը Արտաքին զննում	Շինարարության Ավարտին	Կապալառու

Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ընթացքում	Կապալառու,
---	---	-------------	----------------	-------------------------	------------

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:
- 13 Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
- 14 Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
- 15 29.01.2010թ. «ՀՀ կենդանիների կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71–Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն
- 16 29.01.2010թ. «ՀՀ բույսերի կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 72–Ն որոշումն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Ձև N 1-2



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք
(մարզը, համայնքը)

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 12 «20» փետրվարի 2023 թ.

Օբյեկտ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության հատուկ ջրափրկարարական ջրկատի կայան
(օբյեկտի անվանումը, կառուցում, վերակառուցում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)

Վարչական շենք

(հակիրճ բնորոշումը, հզորությունը)

IV կատեգորիա աշխատաբային

նախագծային փաստաթղթերի մշակման համար:
ոչնկայության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)

Գտնվելու վայրը Մարզ Գեղարքունիք, համայնք Սևան, ք. Հանգստի գոտի 1-ին փողոց 1 / 11 05-004-0046-2066
(մարզի, համայնքի, փողոցի անվանումները, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)

Կառուցապատող Արտակարգ իրավիճակների նախարարություն՝ ք. Երևան, Ա. Միկոյան 109 / 8
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)

Առաջադրանքի տրամադրման հիմքը Հայտ՝ 29.10.2021թ., 17.02.2023թ. N02/07.1/993-2023 գրություն, սեփականության իրավունքի վկայական N 05082020-05-0085
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը)

Այլ դրանքի գործողության ժամկետը՝ 3 տարի

(N 1 հավելվածի 32-րդ կետին համապատասխան)

ՆԱԽԱԳԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

(աստղանիշով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլում
ը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

- Հողամասը գտնվում է Հատուկ պահպանվող տարածք, հանգստի համար նախատեսված
(հողամասի դիրքը քաղաքաշինական միջավայրում, դրա նպատակային և գործառնական նշանակությունը)
- (*) Հողամասի չափերը 0.5հա
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշահարմամբ, մակերեսը (հա))
- Հողամասի առկա վիճակը Ռելեֆը՝ մեղմ թեքությամբ
(ռելիեֆի բնութագիրը, շենքերի (այլ թվում՝ քանդման ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հարկայնությունը, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)
- (*) Տրանսպորտային պայմանները Հանգստի գոտի 1-ին փողոց
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մոտեցումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ (ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

Կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքներ (նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքները, այդ թվում՝ ստորգետնյա)

6. (*) Կից հողամասեր

«Սևան Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի տարածք

(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ)

«Սևան Ազգային Պարկ» ՊՈԱԿ-ի տարածք

(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ

Չկա

(տեղանքում գործող արտադրական, պաշտպանվող օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերվիտուտները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԼԱՆՔՆԵՐԸ

(աստիճանիչով (*) նշված դրույթների գրաֆիկական արտացոլումը փրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ

Վարչական շենք 27.055x11.26մ չափերով

(ելնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

9.1. (*) օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից (մետր)

Համաձայն սխեմայի

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օբյեկտներից) (մետր)

Համաձայն սխեմայի

9.3. թույլատրելի բարձրությունը (մետր)

12մ

9.4. կառուցապատման խտության գործակիցը (կառուցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

304.6/5000

9.5. կառուցապատման տոկոսը (կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

6.1%

9.6. կանաչապատման տոկոսը (կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

93.9%

9.7. այլ պահանջներ

Չկա

10. Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը

Չկա

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները

Չկա

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ

Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ

12.1. (*) ջրամատակարարում, կոյուղի, տաք ջրի մատակարարում	Կցվում է <u>Համաձայն տեխ. պայմանի</u> (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.2. (*) էլեկտրամատակարարում	Կցվում է <u>Համաձայն տեխ. պայմանի</u> (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.3. (*) գազամատակարարում	Կցվում է <u>Համաձայն տեխ. պայմանի</u> (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)
12.4. (*) էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը	Կցվում է <u>Չկա</u> (համաձայն N 1 հավելվածի 58-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ելակետային տվյալների)
12.5. թույլ հոսանքներ	<u>Չկա</u>
12.6. աղբահանություն	<u>Համաձայն պայմանագրի</u>
13. Տարածքի ինժեներական նախապատրաստում	<u>Նախագծային լուծումներով</u> (ոեյիեֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական պաշտպանության միջոցառումները)
14. Բարեկարգում	<u>ՀՀ կառավարության 18.12.2008թ N 1563-Ն որոշման պահանջներին համապատասխան</u> (լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները, կանաչապատում, ճարտարապետական փոքր ձևեր, ցանկապատում, գովազդ և այլն)
15. Շինարարական նյութեր	<u>Չին ստանդարտներին համապատասխան</u> (շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ առաջարկությունները)
16. Պաշտպանական կառույցներ	<u>Համաձայն գործող նորմերի</u> (արտակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների պաշտպանության միջոցառումները)
17. Հակահրդեհային պահանջներ	<u>Համաձայն՝ ՀՀԸՆ 21-01-2014</u> (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)
18. Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ	<u>Համաձայն՝ ՀՀԸՆ 4-11.07.01-2006/ՄՍՆ3'02-05-2003</u>
19. Շրջակա միջավայրի պահպանում	<u>Համաձայն գործող նորմերի</u> (շրջակա միջավայրը վտանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)
20. Շինարարության կազմակերպում	<u>Սահմանազատել չին. հրապարակի տարածքն</u> (առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտի անխափան աշխատանքի ապահովման վերաբերյալ)
21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը	<u>Երեք տարի. նախագիծ</u> (նշվում են առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ

Պետական համալիր փորձաքննություն
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի երաշխավորագիրը՝ հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)

23. Միջանկյալ համաձայնեցում

Սևանի համայնքապետարան, «Սևան Ազգային պարկ» ՊՈԱԿ, «Արխիտոն» ՍՊԸ

(իրավասու մարմնի կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում շահագրգիռ մարմինների հետ էսքիզային նախագծի նախնական համաձայնեցում, եղևում է նաև առաջադրանքի փոփոխման հնարավորությունը՝ N 1 հավելվածի 89-րդ կետով նախատեսված դեպքում)

24. Հասարակական քննարկումներ

Համաձայն գործող կարգի
(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

25. Համաձայնեցումների կամ մասնագիտական եզրակացությունների ստացում

ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 19.01.2022թ. N 01 //0300-2022 գրություն

(եղևում են տվյալ օբյեկտի համաձայնեցման՝ օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում

Չկա

27. Այլ պայմաններ

Չկա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ


ՍԵՎԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

S.



5. ԵՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԹԱԳԻՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝
2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կառուցարարին ծածկագիրը	Ցեանկ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Անշարժ գույքը ամրակցված է ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարությանը:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Կարմեն
Հովհաննիսյան:

Չբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման
անշարժ գույքի ալյազ ռեգիստր:

ՎԿԱՅԱԿԱՆ N 05082020-05-0085, գաղտնաբառ՝ MJYGREI8HYBQ

Պատվարագրի հստակությունը և վավերականությունը կապով է պայմանավորված հետևյալ հարապատասխանությամբ:
www.amn.am/տեղեկություն/վավերականություն

Էջ 2/2

Կապույտ
կոմպլեքս



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2 հուլիսի 2020 թվականի N 1116 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N 752-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում հանրային լողափերի կազմակերպման մասին» N 752-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) որոշման վերնագիրը «ԼՈՂԱՓԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ» քառերից հետո լրացնել «ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ» քառերով.

2) որոշման 1-ին կետում «5.5» թիվը փոխարինել «5.0» թվով, «1.25» թիվը փոխարինել «0.94605» թվով, իսկ «N 5 հավելվածի» քառերից հետո լրացնել «, Սևանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող տարածքից 0.5 հեկտար հողամասը (որից՝

Kvoroshum1116792 նոր տարածք

0.30395 հեկտարը գտնվում է 1905.0 մ բացարձակ նիշից բարձր) ամրացնել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությանը՝ հատուկ ջրափրկարարական ջոկատի կենտրոնական կայանի (բազայի) շենքի կառուցման համար՝ համաձայն N 6 հավելվածի» քառերով.

3) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

4) որոշումը լրացնել նոր՝ N 6 հավելվածով՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարին, Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարին և Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված գույքի հանձնմանը ընդունման աշխատանքների կատարումը:

3. Սահմանել, որ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվելու են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության ֆինանսական միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2020 թ. հուլիսի 3
Երևան

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ



Kvorosham1116322 նոր տարածք

